

"Droschak"

ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienne.

# ԴՐՈՇԱԿ

Adresse :  
Rédaction du "Droschak"  
GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԴԱՂՆԱԿՅՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

Հ.Յ.Գ. ԲԻՐՈՅՑ  
ՊՐԻՆՏՍԻՍ  
A.R.F. BUREAU  
LIBRARY



ԿՈՒՌՈՒԲԱՇԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

21/2 ՅՈՒՆԻՍԸ 1898

(Տես կրկն 33)



# ՆՇԱՆԱԽՈՐ ԵՆԻՐՈՎԱԾԻՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

«Դրօշակ»-ի խմբագրութիւնը մարտ 27 Թւակիր գրութեամբ մը դիմած էր եւրօպական քանի մը յայտնի և հեղինակաւոր անձներու, խնդրելով անոնցմէ որ իրենց ձայնը բարձրացնեն հայկական խնդիրը քաղաքականութեան օրակարգն անցնելու, օգտուելով զինաթափութեան խորհրդաժողովին մտաւորաւ գումարումէն:

Այդ առթիւ խմբագրութեան ստացած պատասխաններէն ստորև կը հրատարակենք հանրածանօթ Թիչչիօթի Գարիբալդիի և Ամիլկար Չիպրիանիի նամակները:

Առաջինը, ինչպէս յայտնի է, անմահ Գարիբալդիի որդին է, իտալացի նշանաւոր գործիչ և անդամ իտալական խորհրդարանին: Իսկ երկրորդը՝ նմանապէս մեծ անուն ունի իտալական ազգին մէջ: 1897-ին երկուքն ալ իտալացի կամաւորներու գլուխն անցած, փոքրիկ Յունաստանին օգնութեան գացին թիւրքերուն դէմ կուսելու համար: Չիպրիանին այդ կուսին մէջ ծանր կերպով վիրաւորուեցաւ, արժանանալով ազատութեան բոլոր բարեկամներուն ցաւակցութեանը և հրաւիրելով իր և իր մեծանուն ընկերոջ վրայ բովանդակ աշխարհին սքանչացումը: Երկրորդը այդ երկու ականաւոր մարդասէրներուն կարծիքը մեր դատի մասին, պարտք կը համարինք հրապարակով իրենց յայտնել «Դաշնակցութեան» համակրական խորին զգացումները:

Egregio Sig. Direttore  
del DROSCA NK

Credo assolutamente inutile rivolgersi alla Conferenza per la Pace.

Il fatto che questa ha luogo per iniziativa dell'autocrate Russo — il quale mentre predica pace distrugge quel poco di libertà che ancora esisteva nel suo vasto impero, parlo della Finlandia — è segno sicuro che questa sua proposta nasconde un irisidia a danno della giustizia, libertà e indipendenza dei popoli.

Gli Armeni, come altri popoli che oggi subiscono la tirrania turca, devono — se vogliono essere liberi — domandare quest'atto de giustizia e umanità con l'arma alla mano.

In questo modo solamente si può forzare la diplomazia Europea, ad ascoltare la voce dei popoli infelici.

E in questo senso io e i miei amici siamo a disposizione del disgraziato popolo armeno, che ha tutta la nostra simpatia.

Credetemi sempre vostro sincero amico.

RICCIOTTI GARIBALDI.

27 mars 99.  
Roma.

Chers Citoyens,

Je m'empresse de répondre à la hâte à votre lettre du 24 mars, pour vous remercier d'abord de vous être souvenus de moi, ensuite pour vous dire franchement ce que je pense de la question arménienne.

La question arménienne, si elle est pour nous et pour tous ceux qui ont du cœur question humanitaire au dernier degré, si elle est un long martyrologe émouvant et digne, non seulement d'intérêt, mais d'amour et de pitié profonde, elle n'est pas telle pour les politiciens froids et féroces qui gouvernent aujourd'hui l'Europe.

Les massacres épouvantables, inouis, féroces, infâmes et scélérats de 94-96, et qui ont ému tout le monde, les ont laissés froids et indifférents.

Յարգելի պ. տնօրէն Դրօշակի

Բացարձակապէս անօգուտ կը կարծեմ խաղաղութեան խորհրդաժողովին դիմելը:

Այն իրողութիւնը որ այդ ժողովը ոուս ինքնակալին նախաձեռնութիւնով կը կատարուի որ խաղաղութիւն քարոզած պահուն իսկ, կը քանդէ իր ընդարձակ կայսրութեան մէջ գոյութիւն ունեցող քչիկ մը ազատութիւնն ալ — Ֆինլանդան ըսել կ'ուզեմ — ստոյգ ապացոյց մըն է թէ իր առաջարկութեան ներքև ծուղակ մը թաքնուած է իմաստ ժողովուրդներու արդարութեան, ազատութեան և անկախութեան:

Հայերը, ինչպէս և միւս ժողովուրդները՝ որոնք այսօր Թիւրքիոյ բռնութեան լուծը կը կրեն, եթէ ազատ ըլլալ կ'ուզեն, պէտք է այդ արդարութեան և մարդկայնութեան գործը պահանջեն զէնքը ձեռքներէն:

Այս կերպով միայն կարելի է զօրը դնել եւրօպական դիւանագիտութիւնը, որպէսզի լսէ թշուառ ժողովուրդներու ձայնին:

Այսպէս ըլլալով՝ ես և իմ բարեկամներս մենք մեզ արամադրութեան տակ կը դնենք դժբախտ հայ ժողովուրդին, որուն հետ է մեր բոլոր համակրութիւնը: Հաւատացէք միշտ անկեղծ բարեկամութեանս:

ԹԻՉՉԻՕԹԻ ԳԱՐԻԲԱԼԴԻ.

27 մարտ 99.  
Հռօմ.

Սիրելի քաղաքացիներ,

Կը փութամ շտապով պատասխանել ձեր 24 մարտ նամակին, նախ՝ շնորհակալութիւն յայտնելու որ զիս յիշեր էք, յետոյ անկեղծօրէն ըսելու համար իմ մտածուած հայկական խնդրի մասին:

Հայկական հարցը, եթէ մեզի և բոլոր սրտի տէր մարդոց համար վերին աստիճանի մարդասիրական հարց մըն է, եթէ երկար ու սրտայոյզ վկայաբանութիւն մըն է ան, արժանի ոչ միայն շահեկանութեան, այլև սիրոյ և խորին գթութեան. այդպէս չէ պաղ և վայրագ քաղաքականներուն համար, որոնք կը կառավարեն այսօր Եւրօպան:

94-96-ի զարհուրելի, անլուր, խուժ, ամարդի և եղենային կոտորածները որոնք յուզեցին արարաշխարհ սառն ու անտարբեր ձգեցին զանոնք:

A vos cris de détresse, aux râles des égorgés, aux gémissements des persécutés, des emprisonnés, les Cabinets ont envoyé des notes insignifiantes sachant d'avance que l'assassin Abdul-Hamid n'en aurait tenu aucun compte.

Votre sang leur a éclaboussé le visage, ils n'ont pas bougé; ils n'ont pas bougé à l'incendie de vos villes, de vos maisons, ils vous ont laissés égorgés sous leurs yeux, parce que tous convoitaient de partager la Turquie, mais tous pensaient se faire la part du lion. Cela n'étant pas possible, le martyr d'un peuple disparaissait devant leur convoitise déçue.

Du reste, les soi-disant six grandes puissances se moquent des faibles, et dans la guerre greco-turque ont joué le rôle infâme des gendarmes de Turquie contre la petite Grèce.

Oui, l'Europe a été la complice de votre assassin; oui, elle s'est rendue solidaire avec les Kurdes. Elle a préféré avoir les mains baignées dans votre sang, que toucher à un trône, même lorsque sur ce trône il y avait un vulgaire malfaiteur, un brigand, un criminel.

Après ces tristes preuves, vous n'avez rien à espérer de l'Europe dite civilisée.

Elle vous a abandonnés dans un moment tragique, lorsque le yatagan turc vous fauchait par milliers, et que les peuples d'Europe étaient avec vous.

Il y a, oui, une proposition de désarmement qui ne sera pas acceptée d'abord, ensuite s'ils l'acceptaient, ce serait pour mieux vous mitrailler demain, car le partage de la Chine et de l'Afrique ne se feront pas par les voies pacifiques; et, dans ce Congrès composé d'êtres assoiffés de sang et de rapine, votre cri de justice n'y arrivera pas, personne n'osera en parler, personne n'en parlera.

Il ne faut donc pas que vous espériez quoi que ce soit de l'Europe. Elle est contre vous, elle vous l'a déjà prouvé, et vous le prouverait encore à la première occasion.

Je n'ose pas vous dire que les peuples ne doivent espérer, avoir confiance qu'en eux-mêmes.

Les gouvernements d'Europe, si jamais ils prenaient votre défense — chose impossible — vous apporteraient le servage par la liberté.

Celle-ci on la conquiert en combattant, en la baignant de son sang.

Les peuples opprimés n'ont qu'un droit, droit inconteste : la révolte.

Si vous avez les moyens de la préparer intelligemment, comptez sur moi, sur mon concours.

A vous de cœur.

A. CIPRIANI.

111, rue Réaumur.  
PARIS, ce 4 iv 99.

Ձեր տաղնապալից ճիչերուն, խողխողածներուն հռնգիւններուն, հալածածներուն ու բանտարկածներուն լաց ու կոծանքին վրայ, դահլիճները նշանակութենէ զուրկ ծանուցազրբեր խրկեցին, նախապէս դիտնալով որ մարդասպան Սբդիւլ Համիդ կարևորութիւն անգամ պիտի չտար:

Ձեր արիւնը անոնց երեսը ցայտեց, ձեր քաղաքները, տունները կրակի տրեցան, անոնք տեղերնէն չերերացին. ձգեցին ձեզ, աչքերնուն առջև, որ փողոտեն, որովհետև ամէնքն ալ Թիւրքիան բաժնելու չար ցանկութիւնը ունէին, բայց ամէն մէկը կը մտածէր առիւծի բաժինն ստանար Կարեղի չէր աս, ու ժողովրդի մը նահատակութիւնը կ'անհետանար յուսովոյ աչքածակութեան մը առջև:

Մնաց որ իրենք դիրենք մեծ կոշող վեց տերութիւնները կը ծիծաղին տկարներուն վրայ: Յունա-թրքական պատերազմին մէջ փոքրիկ Յունաստանի դէմ թիւրք ժանդարմներու խայտառակ դերը խաղացին անոնք:

Այո, Եւրոպան ձեր սպանչին մեղակիցը և քիւրդերուն հետ համերաշխ եղաւ: Ան (Եւրոպան) նախադասեց ձեր արիւնին մէջ թաթաւ ձեռքեր ունենալ, քան ձեռք դպցնել գահու մը, նոյնիսկ երբ այդ գահուն վրայ կը բազմէր գոեհիկ չարագործ մը, աւազակ մը, եղեռնագործ մը:

Այս տխուր փորձերէն ետքը ալ քաղաքակիրթ ըսած Եւրոպայէն յուսալիք բան չունիք:

Ողբերգական ըոպէի մը մէջ ան երեսի վրայ ձգեց ձեզ, երբ թրքական եաթաղանը ձեզմէն հազարաւորներ կը մանդղէր, թէև Եւրոպայի ժողովուրդները ձեզի հետ էին:

Իրաւ է, զէնընկէցութեան առաջարկ մը կայ, որ նախ ընդունելի պիտի չըլլայ, յետոյ եթէ ընդունուի ալ վաղը ձեզ աւելի լաւ կերպով գնդահար ընելու համար է, որովհետև Չինաստանի և Ափրիկէի բաժանումը խաղաղ ճամբով չպիտի կատարուի: Եւ այս խորհրդաժողովին մէջ՝ որ բաղկացած է արիւնի ու գողյափշտակութեան ծարաւի մարդերէ, ձեր արդարութեան ճիշտ պիտի չհասնի. մարդ պիտի չհամարձակի բերան բանալ անոր մասին. ոչ ոք ձայն պիտի հանէ:

Եւրոպայէն որևէ բան մը յուսալու չէք ուրեմն: Ան ձեզի դէմ է փորձով ցոյց տաւ արդէն ձեզի և առջին առիթը ներկայացածին նորէն պիտի տայ փորձը:

Չեմ համարձակիր ըսել թէ ժողովուրդները պէտք չէ յուսան, թէ յոյսերնին իրենք իրենց վրայ դնելու են միայն:

Եւրոպական կառավարութիւնները եթէ երբեք ձեր պաշտպանութիւնը ձեռք առնէին — անկարելի բան — աղատութեան միջոցով սարկութիւն պիտի բերէին ձեզ:

Ազատութիւնը կուելով և զայն արիւնով լողցնելով ձեռք կը ձգի:

Հարստահարած ժողովուրդները մէկ իրաւունք միայն ունին, անվիճելի իրաւունք — ապստամբութիւնը:

Եթէ դուք խելամտորէն զայն պատրաստելու միջոցները ունիք, վստահ եղիք իմ վրայ, իմ աջակցութեանս վրայ:

Սրտանց ձերդ  
ԱՄԻԼԿԱՐ ԶԻՊՐԻԱՆԻ

### Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ Ը Կ Ի Ի Ո Վ

«Միայն մի մարդ աշխարհիս երեսին կարող էր ֆրանսիական յեղափոխութեան առաջն առնել, այն է՝ Ադամ, եթէ խեղդէր Եւայի ստեղծելուց առաջ» — ասել է մի խելօք հրապարակախօս՝ ցոյց տալու համար այդ պատմական դէպքի անհրաժեշտութիւնը:

Նոյնը կարելի է ասել և բոլոր յեղափոխութիւնների մասին, որովհետև ամէն մի շարժում, որ արժանի է այդ անուն, պատրաստելով տաննեակ տարիների ընթացքում և ամբողջ սերունդների գործակցութեամբ, առաջ է գալիս որոշ պատմական ընթացքում իբրև մի երևոյթ, որ կատարելու է անխուսափելի կերպով:

Եւ այդպէս անհրաժեշտօրէն տեղի է ունենում ժողովրդական յեղափոխութեան ոչ միայն ծագումը, այլ և զարգացումը՝ իր գլխաւոր մօմէնտներում, որովհետև յեղափոխական շարժումը, սկիզբն առած լինելով անդառնալի անցեալում և արդէն ստացած լինելով որոշ ուղղութիւն, յառաջ է ընթանում իբրև մի տարերային հոսանք, անկախ իր խոշոր գծերում՝ այս կամ այն անհատի կամայականութիւնից և ենթակայ միմիայն որոշ սօցիօլօգիական օրէնքների, որոնցից մէկը՝ կարելի է համարել ամէնահիմնականը, այն է, թէ մի ստրուկ ժողովուրդը նախ քան յաղթական ապստամբութիւնը ճակատագրօրէն պէտք է անցնի մասնակի և կիսայաջող կամ անյաջող կռիւների շրջանով:

Այդ տարրական ճշմարտութիւն է ամէն մէկի համար, որ թէկուզ հարևանցօրէն ուսումնասիրել է զանազան ազգերի մէջ կատարած յեղափոխութիւնները, բայց կան գրուիւններ, որոնք անընդունակ են մարտել նոյնիսկ տարրական ճշմարտութիւններ և ահա մեր մէջ պարբերաբար դուրս են գալիս զանազան անկիւններից *soi-disant* քննադատներ և իր-յեղափոխականների պարզամիտ յարձակումներով և երեխայական ծրագիրներով, որոնց էական միտքն այն է, թէ հայ ազգը կարող էր և կարող է մեռած ձևանալ և լուռ ու մունջ պատրաստել մի օր յանկարծ միահամուռ ապստամբութիւն բարձրացնելու կարծես թէ՛ ժողովրդական յեղափոխութիւնը պալատական դաւադրութիւն է, որ պարագլուխները կարող են ձեռքի տակ պատրաստել նախապէս բաժանելով դերերը՝ ինչպէս մի թատրօնական ներկայացման մէջ, որպէս զի յետոյ պայթեցնեն որոշւած ընթացքին և ուզած պայմաններում:

Պէտք է միամիտ լինել՝ կարծելու համար, թէ ժողովուրդը կարող է քնել ստրուկ և զարթնել ազատ: Ստրկութիւնը օձի շապիկ չէ, որ կարելի լինի միանգամից փոխել: Նա մտնում է ժողովրդի հոգու մէջ, նա ստորացնում է զգացումները, նա փչացնում է բնաւ-

րութիւնները, և ահա՛ որպէս զի մի ստրկացած ժողովուրդ կարողանայ ազատութիւն ձեռք բերել, նա ոչ միայն պէտք է տարիների ընթացքում սովորի գնահատել ազատութիւնը, զգալ նրա անհրաժեշտութիւնը իր բոլոր նեարդերով, այլև պէտք է կազմակերպուի, որպէս զի կարողանայ ջախջախել կազմակերպած թշնամուն: Իսկ այդ չի կարող կատարել միմիայն լրագրական քարոզով և ծածուկ դաւադրութիւններով, առանց կոււի, առանց՝ գործի միջոցով պրօպագանդայի: Ազատութիւնը չի ընդունում պլատօնական սեր, նրան կարելի է սիրել միայն իրական սիրով, որ չգիտի տարբերութիւն խօսքի և գործի մէջ: Այն ժողովուրդը, որ ընդունակ է կարգալ ներբողներ ազատութեան և լուռ տանել բռնակալութիւն, նա կորած է ազատութեան համար, նա անընդունակ է յեղափոխութիւն անել:

Կոււի և միմիայն կոււի միջոցով կարող է մի ժողովուրդ պատրաստել յաղթական պատերազմի համար: Չկայ ոչ մի դահլիճ, ուր կարելի լինէր խաղաղ կրկնութիւններ անել ապագայ ապստամբութիւնների համար: Յեղափոխական բանակները կազմակերպւում և վարժուում են ոչ զօրանոցներում և ոչ զօրախաղերով, այլ հայդուկային խմբերում և պարտիզանական կուռում: *Durch Kampf zum Sieg* (կուռով դէպի յաղթանակ) եղել է բոլոր յեղափոխականների նշանաբանը: Կոււ յարատև, կոււ անընդհատ, յաճախ՝ անյաջող: Չկայ ոչ մի ազգ, որ նախ քան ազատելը անհրաժեշտօրէն անցած չլինի փոքրիկ և վիժւած բռնկումների բովով: Այդ բռնկումների միջոցով է կատարում ստրկացած ժողովրդի հոգեբանական էւօլիցիան, նրանց մէջ է միւսում նրա յեղափոխական ոգին, նրանց շնորհիւ է նա սովորում գնահատել և գործածել զէնքը, որ անօգուտ գործիք է յեղափոխական դպրոց չանցած ըստրուկ ժողովրդի ձեռքում:

Այդ է յեղափոխութիւնների անխուսափելի օրէնքը, որ հայ գործիչները անզօր են փոփոխել և որին նրանք պէտք է միայն համակերպւեն: Չենք ուզում ասել իհարկէ, թէ նախատեսութիւնը և շրջահայեցութիւնը դեր չունեն կատարելու յեղափոխութեան մասնաւոր գործառնութիւնների մէջ և թէ չպէտք է ձգտել յեղափոխութեան մէջ որքան կարելի է խնայել ժողովրդի արիւնը: Այ, մենք ուզում ենք միայն մի աւելորդ անգամ ևս շեշտել այն ճշմարտութիւնը, թէ Աւետեաց աշխարհը առաջնորդող լուսաւոր ամպը միշտ անցնում է արեան Կարմիր ծովի և Սինայի՝ առաջափոխ վրայով և թէ միայն վատերը կարող են փսսուալ Եգիպտոսում՝ թողած ստրկական կեանքը և առարգել այն մարդկանց, որոնք դուրս հանեցին նրանց այդ կեանքից:



ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ՄԷՋ

I

Դարձեալ սովի լուրեր...

Երկու շաբաթից ի վեր, սկսած այն օրից, երբ ծանօթ հայասէր Ախտմիստրի դուքսը հրաւեր կարգաց անգլիական ազգին՝ մի միտն մատակարարել հայկական նահանգների ժողովուրդը սովամահ լինելուց ազատելու համար, փակած բերանները բացեցին, և ահա՛ ամէն օր հիւպատոսներն ու նրանց հետ միասին եւրօպական լրագիրները ստիպում են մեզ՝ յուզած սրտով կարգալ սովի սրտակտուր լուրերը, լուրեր՝ շատ հին և շատ ծանօթ...

— Մի՞թէ դարձեալ հաց չկայ, բացագանչում է բարեսիրտ, եթէ չստանա միամիտ, եւրօպացին. — չէ՞ որ փող հանգանակեցին, կօմիտէներ կազմեցին, վերջապէս բէֆօրմների ծրագիր մշակեցին...

«Մի՞թէ դարձեալ հաց չկայ» — սրպիսի հեգնութիւն: Բայց մի՞թէ մոռացաւ Եւրօպան, որ հացը աւերակ աների մէջ չի բուսնում և ոչ էլ ոռոգում կարմիր արիւնով: Նա բուսնում է միայն այնտեղ, ուր արեան փոխարէն աշխատաւոր շինականի հալալ քրտինքն է հոսում, այնտեղ, ուր սուրի և դաշոյնի փոխարէն՝ արեգակի կենդանացուցիչ ճառագայթների տակ պսպրում են գերանդին և մանգաղը, խոփը և ձևիչը...

Հայը չունի այլևս ոչ խօփ, ոչ ձևիչ, ոչ գերանդի և ոչ մանգաղ: Այդ մանգաղով համբիդական քիւրդը նրա աշխատող ձեռքն է կտրում, իսկ շինականի խօփը և գերանդին՝ բռնութեան քուրաներում վերածուլած՝ դարձել են սուր և քրուսգ, որոնցով սուլթանի զինւորները կտրում են ոչ միայն հայի ձեռքը, այլ և աւերում այդ ձեռքով շէնացրած տունը և եկեղեցին, արտը և այգին...

Հինգերորդ տարին է արդէն, որ ամբողջ Հայաստանում քրտինքի փոխարէն կարմիր արիւն է հոսում: Տաս տարուց աւելի է, որ իր խրճիթից վաղ առաւօտեան դուրս եկող հայը՝ քայլերը ուղղում է ոչ թէ դէպի դաշտը՝ իր գաւակների համար հաց ցանելու, այլ դէպի օտար, անծանօթ, շատ անգամ անհիւրընկալ երկիրներ՝ օգնութիւն մուրալու, աշխատանք, գործ, ապրուստ ձարելու: Երկիրը դատարկած է աշխատող ձեռքերից, ամբողջ գիւղեր և շրջաններ այլևս չունեն մաճ բունող երիտասարդ ուժեր, — նրանք կամ հալածւած են կամ կոտորւած, — իսկ «ամէնագէտ» Եւրօպան շարունակում է միամտաբար հարցնել՝ «Մի՞թէ դարձեալ հաց չկայ...»

Ներկայ ժամանակը հրաշքների ժամանակ չէ, և այդ պատճառով ոչ հացը և ոչ սովը երկնքից չեն իջնում՝ ինչպէս մանանայ կամ ինչպէս աստուածային պատիժ: Երկուսն էլ ծնւում են հողից, երկուսն էլ արդիւնք են «աշխատանքի»... — մէկը արդիւնաբերող, մշակող ծիւցնող աշխատանքի, որ յատուկ է քրտինք թափող, հողին կպած ժողովուրդին, միւսը՝ ամէն ինչ ամայացնող, քանդող, հալածասէր բռնութեան, քայքայիչ կառավարութեան: Այնտեղ, ուր չկայ առաջինը, այնտեղ միշտ կանգուն է երկրորդը: Եւ այն օրից, երբ հայ ժողովուրդը բռնաւոր և սպանիչ թիւրք կառավարութեան ձեռքով դուրս քշեց իր բնիկ տնից և իր սեփական արտերից, որպէս զի այդտեղից էլ՝ «քրտի-

տոնեայ» կառավարութիւնների շնորհիւ միանգամայն տարագրւի դէպի օտար երկիրներ, այն օրից Հայաստանը դարձաւ սովաստան:

Յոյց տւէք 1878 թւից, այսինքն այն օրից, երբ թիւրքաց կառավարութիւնը պաշտօնակալ Կոնի յայտարարեց հայ տարրին, մինչև այսօր մի հատիկ տարի, երբ սով չլինէր Հայաստանի որ և է գաւառում կամ նահանգում: Այդպիսի տարի այս քսան տարւայ պատմութեան մէջ՝ գոյութիւն չունի: Տարբերութիւնը նրանումն է միայն, որ հալածանքի և բռնութեան մասնակի շրջանում՝ սովն էլ մասնակի էր, յատուկ մի նահանգի կամ մի վիլայէթի, իսկ երբ հալածանքը և կոտորածը դարձաւ ընդհանուր, ինչպէս վերջին հինգ տարին, սովն էլ ընդհանուր կերպարանք առաւ... Ուրիշ բան անկարելի էր սպասել...

Ասիական խաւարում կուլտուրայի խաչը իր թոյլ ուսերին վերցրած, պատիւ և արդարութիւն պահանջող ամբողջ ժողովուրդ կոտորեց, նրա դաշտերը և սեփականութիւնը բաժանեցին քիւրդին և թիւրքին, իսկ այսօր այդ բոլորի սառնասիրտ վկան, «բարեսիրտ» Եւրօպան հանգանակութիւններ է անում՝ քաղցածներին սովի ճանկից ազատելու համար... Եթէ խեղճ հայ ժողովուրդի ձայնը Հայաստանի խորքերից ուղղակի Եւրօպայի ահանջին հասնէր, նա կը գոչէր, «Ձեմ՝ ուզում քո նպաստը. ես մուրացկան չեմ. վերադարձրու ինձ իմ հայրենիքը, իմ օջախը, իմ յափըշտակած մալը, տուր ինձ ազատութիւն վայելելու իմ աշխատանքի պտուղը՝ ես ինքս ինձ կը կերակրեմ, ես ինքս կը պահեմ իմ որբերին և սովեալներին: Ես քեզանից ազատութիւն եմ պահանջում և ոչ թէ դրամ...»

Մի՞թէ Եւրօպան չի լսում այդ ձայները...

II

Ո՛չ, չի լսում. նա դբաղւած է որբանոցներով, ժամանակակից «մարդասիրութեան» այդ փոքրիկ արձաններով: Տարաբախտաբար այդ հարցումն էլ մարդասէր Եւրօպային վիճակած է ենթարկել թիւրքական անսպառ ծաղրին և Աբգիւլ Համիդի հանձարեղ հեգնութեան: Եւ ահա հէնց այն միջոցին, երբ միսիոնարները և միսիոնարութիւնները մարդասիրաբար իրենց ապաստարաններում փայփայում էին հօրից և մօրից զրկւած՝ քաղցած և սառած խարբրողի, վանեցի, վշեցի և սեբաստացի մանուկներին, օսմանեան կառավարութիւնը՝ լրբութեան սահմանից անցած աներեսութեամբ դուրս է քշում երկրից, իբրև վտանգաւոր տարրեր, անմեղ մանուկներին խնամող ձեռքերը և փակում որբանոցները...

Փակելու որբանոցները, — ահա այն նորութիւնը, որ Կ. Պօլսի բռնապետութիւնը, իրեն յատուկ հանձարով, ստեղծագործեց և մտքեց 19-րդ դարի պատմութեան մէջ, հասկացնելով քաղաքական Եւրօպային, որ ոչ որբ, ոչ մի պետութիւն, նոյնիսկ այնքան հզօր, որքան Անգլիան, և ոչ մի եկեղեցի, նոյնիսկ այնքան զօրեղ, որքան Լութերի հիմնած եկեղեցին, բնաւ իրաւունք չունեն իր բռնութեան սահմաններում ինամբ մատակարարել երեխաներին անգամ, որոնց միակ յանցանքը այն է, որ... հայր և մայր են ունեցել: — Այդ

անմեղ երեխաները, մտածում է թիւրք կառավարութիւնը, Կը մեծանան որբանոցներում, մաքուր կը դառնան, կը սխալ իրենց հայրերին և լիակամ մայրերին, կը տեսնեն արիւնքաբաժնի հայրենիքը և կրկին ձայներ կը բարձրացնեն: Չէ. դա վտանգաւոր է... պէտք է սովորեցնուի որբերին, պէտք է փակել որբանոցները... Եւ փակում է անարգել...

III

Մական միայն որբանոցները չեն, որ փակուում են: Փակուում է մի ամբողջ երկիր: Հայկական կոտորածների հեղինակը վճռել է աւետել աշխարհին մի նոր թէօրիա, — այն, որ մի ամբողջ ազգ կարող է հայրենիք ունենալ, բայց այդ հայրենիքում տեղ չունենալ: 94-95 թվականներին, երբ հարիւր հազար ժողովուրդ, կոտորածների սպառնալիքի տակ, դուրս փախաւ դժբախտ հայրենիքից, ինչպէս յանկարծակիի կէած մըրջիւններ՝ քանդուած մըրջանոցից, օսմանեան կառավարութիւնը հրճեց, յիշելով իր մշտական նշանաբանը—որբան քիչ հայ՝ այնքան լաւ: Բայց այժմ, յիշատակեան ազգը՝ ուզում է դառնալ հայրենիք, ուզում է նորից փորձել իր բախտը այն երկրի մէջ, որ իր սեփականն է, իր հարգատր: Մական դարձեալ արգելք: Թիւրք կառավարութիւնը թող չի տալիս. նա փակել է Հայաստանը հայի առաջ, ինչպէս փակեց որբանոցները որբերի առաջ: Երկու տարի է, ինչ ուսաց կառավարութիւնը սպառնալից առաջարկութիւններ է անում սուլթանին, ծանուցագրեր է ներկայացնում, բացատրում է, որ Կովկասը անկարող է կերակրել հայրենիքից փախած ահազին բազմութիւնը, վերջապէս ինքը իր կողմից քշում է գաղթականներին Կովկասի սահմաններից, — բայց անօգուտ. սուլթանի «հիւանդոտ» կառավարութիւնը յիշողով «Ռուսաստանին կերակրում է նոյն խոստովներով, նոյն յրայց» — երով որով նա ահա 10 տարի է կերակրում է եւրոպական կոնցէրտը, և գաղթականները շարունակում են թափառել կովկասեան քաղաքներում, իբրև մուրացկաններ, անկարող ոտք դնելու իրենց վաթանի մէջ: Հայրենիքը անկարող է ընդունել իր տարագիր զաւակներին, որովհետև նա փակած է զօրեղ ձեռքով, որ կոչում է սուլթանի ձեռք, և անկարող է բացել մի ուրիշ իբր թէ աւելի զօրեղ ձեռքով, որ կոչում է Եւրոպայի ձեռք...

IV

Այսպէս ուրեմն հայը հող ունի, բայց հաց չունի. որբանոցներ ունի, բայց ապաստան չունի. նա հայրենիք ունի, բայց տուն չունի: Դա է ահա այն երկու կրակը, որի մէջ զբտնում է հայ ժողովուրդը Թիւրքիայում: Երկար մնալ այդ երկու կրակի մէջ — նա անկարող է: Դա բարձր է մարդկային ուժից: Երկու ձանապարհ միայն կայ — կամ այրել, մոխիր դառնալ և քամու բերանը ընկած՝ անհետանալ աշխարհի երեսից, և կամ, հերոսական թոխիք գործելով, դուրս նետուել ստրկական բոցերի միջից և դիմել դէպի փրկարար օրը, դէպի սրբաւայոյդ, գրաւիչ հեռանկար... Այո, երկու ձանապարհ միայն կայ, և մեկը դրանցից արգէն ընտրել է ժամանակակից հայը: Գիտե՛ Եւրոպան, թէ որն է դա...

ԿՈՒՌՈՒԲԱԾԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ

ՏԻԳՐԱՆ ՏԵՐՈՅԵԱՆ — ՎԱԶԳԻՆ

«Յառաջ, քաղաքակրթութիւնը միշտ գոյ է պահանջել մարդկութիւնից. փառք է մեզ, եթէ նրա արծանաւոր գոյնը լինենք»:  
ՎԱԶԳԻՆ («Պրոշակ», 1896, № 19.)

Կուռուբաշ... անէնքի, թէ փառքի անուն. այնտեղ ընկան Վազգէնի հետ Միքօն և Արշակը, այնտեղ են քաջերը...  
Վանում հայ խանութպանին թակում էին թիւրք զինուորները: Խանութպանի բոլոր յանցանքը իր ապրանքի գինը պահանջելն էր. այդ իրաւունքին հակադրած էր թիւրք զինուորի աւելի զօրեղ իրաւունքը — նրա վայրենի ոյժը — և հային թակում էին անողորմ, անսիրտ ձեռով, ամբոխի մէջ, հայ բազմութեան առաջ: Մարդիկ նայում էին, զոհի ճիչք կարեկցութիւն էր շարժում, բայց նրա փրկութիւնը համարձակութեան պէտք ունէր՝ կարեկցութեան գուզը թաց. սակայն այդ չկար՝ եւ բազմութիւնը նայում էր լուռ, սարսափահար: Մի դերձակի խանութի առաջ նստած մի հայ պատանի իր թաւ յօնքերի տակից նոյնպէս նայում էր իր մեծ սև աչքերով ուր ասես փայլում էին այլէկոծ մտքեր, հոգու փոթորիկներ: Զինուորներն անողորմ էին, բազմութիւնը ստրկահոգի, թշուղ վատասիրտ: Պատանի... նա ցած դրեց ձեռքի կարը, վեր ցատկեց տեղից և սարսափած, խելահորոյս բազմութիւնը տեսաւ, թէ ինչպէս կորովի պատանին հուժկու բռունցքներով հարածներ է թափում անաւօթ, անսիրտ զինուորների գլխին: Ընդհանուր շփոթ ու աղմուկ բարձրացաւ այս նորանշան դէպքից. անմեղ զոհը խոյս աւեց, փրկեց, իսկ պատանին տեղի տեց միայն հետզհետէ վրայ հասնող բազմութեան առաջ: Այս նոր Մովսէսը՝ Վազգէնն էր:  
Գպրոցական ուսումը թերի թողած պատանի Յիգրանը (Վազգէն) հայ-բողոքական դերձակի մօտ աշակերտ էր մտած:  
Վազգէնը դերձակի աշակերտ...  
Այն ձեռքը, որ իր սրտի ազնիւ ցնցումներին հըռ հպատակ իր հայրենիքի փրկութեան ներկական գործի կուսաններից մէկը պիտի լինէր, հօր ցանկութեան համաձայն՝ հանդարտութեամբ շարժում էր անեղը: Այն գլուխը, ուր այնքան ազնիւ մտքեր էին բուն դրած՝ ըստ պատկերով յարմար բոյեփին, որ դուրս ցուանան իրենց բոլոր փայլով, կուացած էր մի շնչին լաթի կտորի վրայ, կուացած՝ ծանր, խոհական ձեռով: Գժար էր աւելի աննորդաշնակ բան երևակայել մի անձի կոչման, բնական հակումների և նրա պարապմունքի մէջ:  
Եւ մասները ջղաձգաբար բռնոււ, ձվում էին ողորմելի լաթը, թուխ ձակասի տակ եռացող մաքերը սաւառնում էին հեռու... հեռու... Երբ լեռը հրաբխային է, ինչով կարող ես չափու սահման դնել նրա հսկայական վիժման. երբ ծովը փոթորկալի է, ո՞վ կարող է ալիքների թափը սանձահարել: Այդպէս էր Վազգէնի հոգին: Զինուորների գազանային վարմունքը իր հայրենակցի հետ գուցէ առաջինն էր, որ նրա սրտի մէջ մթեռած յոյ-

զերի առաջին ազնիւ ժայթքումն առաջ բերեց: Այնուհետեւ իրար յաջորդող դէպքերը վերջնապէս Ազգէնին դրին յեղափոխական ծանր, փշալից, բայց վեհ ճանապարհի վրայ: Որքան անօրինակ էր իր գործունէութեան սկիզբը, նոյնքան զարմանալի հերոսական եղաւ նրա շարունակութիւնն ու վախճանը:

Եթէ առաջին դէպքը, որ նրա գործունէութեան առաջին քայլը նշանակեց, վայրենի անարդարութեան դէմ արդար զայրոյթի մի ներդրական պոռթկումն էր, երկրորդ դէպքը, որ նրան մեծապէս ճանապարհի վրայ դրեց, իր երազած գործի, իր փայտայած մարքերի իրագործման համար՝ առաջին նահատակների մարտիրոսութիւնն էր, նրանց ներդրական արիւնն էր:

Ազգէնի հայրը վախճանւած էր, երբ Ձուխագեատուկի մէջ ընկան Գօրջեան և Ագրիպպասեան: Արքայիցը Ազգէնի ամենասիրելի ուսուցիչն էր, որի «վերջին դասը», որքան զարմանալի, նոյնքան դիւրիչ եղաւ իր աշակերտի համար: Գուցէ այդ օրը Ազգէնը որոշեց հետեւել իր արժանաւոր ուսուցչին:

Այդ ժամանակն էր, երբ նա երգեց իր առաջին երգը:  
 «Ի՞նչ, ո՞վ ցանկալի վան, իմ հայրենիք,  
 Միրոյդ կարօտով մաշկիմ ես հերի՛ք...»

Հերի՛ք... որքան շատ բան է ասում այս մէկ հասիկ բառը. հերի՛ք, դադար առ, չարի՛ք, հերի՛ք արցունք, լուռ հեծեծանք, հերի՛ք սարկութիւն, հերի՛ք բնութիւն: Հսկայի մի կողմ էր այդ, բունն ու զօրեղ, դէպի իրեալը տածած այն զարմանալի հաւատով, որ նրա ամբողջ գործունէութեան մէջ իր առաջնորդող աստղը, իր նշանաբանը եղաւ:

Գերձակի խնամութիւն ձգելուց յետոյ՝ նա այլևս Տիգրան Տերոյանն էր՝ «նա յեղափոխական՝ այն՝ փայլուն պատկերն է, որ Ազգէն է կոչւում: Նա այժմ՝ ուսուցիչ է: Արպիսի թուփքը, դերձակի աշակերտը՝ ուսուցիչ: Բարձր մարքերը չէին կարող պարտակել խնամութի չորս պատերի մէջ. նրանք ճանապարհ, նէր, թուփք էին պահանջում: Բաներ կար, որ ասել էր հարկաւոր, կուրծքը ունած էր, նա կը պայթէր, եթէ այրող յոգները դուրս չլծափուէին:

Բունութիւնը խեղաթիւրիչ է: Ժամանակներ կան, երբ ծեծուող մարդի պանջրին պիտի փսփոսալ թէ՛ դքեզ ծեծում են՝, որպէսզի նա հասկանայ, թէ մարմինը ցաւում է:

Ազգէնը ուսուցիչ էր, նա պրօպագանդիստ էր, նա կամաց կամաց բազմացնում էր այն մարդկանց թիւը, որոնց մարմինը ցաւ էր զգում, որոնց սրտերը արօփում էին իր սրտի հետ, որոնք սողորւած էին նոյն ներդրական մարքերով և զգացմունքներով, նոյն ցաւերով:

Հետզհետէ Գրոշակում ապագրւած նրա նամակների, յօդակների ու թղթակցութիւնների մէջ արտայայտւած մարքերն ու զգացմունքներն իրենց խորութեամբ, արդարութեամբ ու յանդուգն մեծապատկերմամբ մշտ զարմանք են յարուցել: Եւ այժմ, երբ այդ փայլուն կեանքը անցաւ յեղափոխական կարմիր հորիզոնով՝ ինչպէս մի վաղանցուկ փայլակ, որ սակայն ծակեց այնքան քննաթիւթախ աչքեր, ջնջեց այնքան սրտեր, այժմ, երբ այդ մարքերն ու գաղափարներն իր իսկ արժամք մկրտւած ժառանգութիւն մնացին մեզ, նրա անշունչ բառերը կեանք և ոգի են ստանում, արձանանում մարդու աչքի առաջ, զարմանք և պատկառանք յարուցանելով:

95 թվից սկսած Անիից մինչև պարսկական սահմանը քանի՛ քանի՛ կուրծքի է մասնակցել Ազգէնը: Այդ թվի հոկտեմբերին մեկը նրան առաջին անգամ տեսնում ենք Սալմաստ. այստեղից դէպի վան առաջնորդող 60 հոգու խմբի մէջ է Ազգէնը. Սարայի կուրում նա իր խմբակով մօտ 15 հոգի, կարողանում է լինամու աչքերից խոյս տալ, մնում է միառժամանակ մարագում՝ փակւած և ապա փորձած պատերազմողի հմտութեամբ իր առաջնորդութեան հաւատացած այդ խումբը հասցնում է իր նպատակատեղին:

Անիի յայտնի կուրից յետոյ Ազգէնը Գետոյի հետ Արագ է քաշոււմ, բայց կրկին վերադառնում է վան, մասնակցում է Անիի երկրորդ կուրին և շնայելով հանգամանքների արտասովոր դժարութիւններին՝ Անիից չի հեռանում:

Գետոյի հեռանալով և մահաւաք Անիի յեղափոխական գործի ոգին, շարժող ուժը Ազգէնն էր: Խանասօրից առաջ մենք նրան երկրորդ անգամ տեսնում ենք Սալմաստում, ապա Միքոյի խմբի Սպահան լճի մօտ մղած հերոսական կուրին մասնակցելուց յետոյ՝ նա վան է հասնում:

Այնուհետև 5-6 ամիս շարունակ Ազգէնի համար ակուրում է մի կեանք, որի ամէն մի օրը, ամէն մի ժամը մի-մի անլուծելի հանելուկ է սովորական մարդու համար: Մարդ չգիտի այդ գործունէութիւնը նրա խելքին վերագրի, քաջութեաննը, անօրինակ համարձակութեաննը, ազատութեան սիրոյն, ծայրայեղ անձնուրացութեաննը, աննկուն յեղափոխական ոգուն: Ինքօք՝ այս բոլորին միասին: Այդ ժամանակում տաճիկ զաւապարութիւնն ինչ միջոցներ չդիմեց նրան ձերբակալելու կամ մի այլ կերպով նրանից ազատելու համար: Հիւպատոսները միշտ ստուգութիւն, անձնական ապահովութեան խոստումներ՝ նրան զինաթմբի անելու, զօրքերի և ոստիկաններ ճեղատարութիւններ, խուզարկութիւններ, — բոլորը, բոլորը անօգուտ, ապարդիւն ջանքեր մնացին: Բոլոր առաջարկութիւններին նրա պատասխանը միշտ յանդուգն, համարձակ, յեղափոխականին վայել վեհութեամբ վճռական մերժումը եղաւ:

Այդ բոլոր փորձերի անյաջողութիւնից կատաղած՝ տաճիկ կառավարութիւնը, ըստ իր սովորութեան, վերջին վերջոյ խաղաղ ազգաբնակչութիւնը նորանոր զրկանքների ենթարկեց. նա գիտէր, որ Ազգէնի սիրտը իր հայրենակիցներին տառապանքները տանել չի կարող: Ազգէնն այս դէպքում էլ իրեն հաւատարիմ մնաց և անարդ կառավարութեան դէմ ձակատ առ ձակատ կուր դուրս եկաւ. անհաւասար, յուսահատ կուր էր այդ: Շատախի առիւծ խմբապետ Միքոյի և վանեցի Արշակի հետ Առուսթաւում հերոսական կուրից յետոյ նա ընկաւ վերջապէս իր արժանաւոր ընկերների հետ: Ընկաւ... ընդամենը 25 տարեկան հասակում... բայց ո՞վ կարող է ասել թէ նա կարճ ապրեց:

Վեանքեր կան, որոնց մի ժամը մի տարի արժի... \* \*

ՄԻԲԱՅԷԼ ԱՊԻՉ-ՄԷԼԻՔԵԱՆ — ՄԻՔՕ

Ժողովուրդի մարդ էր Միքօն, կնոջ երեխաների տէր, իր արդար վաստակով ապրող հիւսն էր նա: 91 թվականին, 35 տարեկան, նա ձգեց բոլորը և հայրակային



խմբի մէջ մտաւ. տանջւած, հարստահարւած, բայց լուռ և համբերատար ամբօխի ներքին, խուլ մոմոռոցն էր Միքօն, որ դուրս ընկաւ, լոյս աշխարհ եկաւ, բարձրաձայն բողբոջող ուժ դարձաւ: Իր համբերութեան մէջ անօրինակ, իր բռնկումների մէջ բուռն՝ ժողովուրդը՝ իր կողջ, փշոջող և ոչ մի արգելքի առաջ տեղի չտուող անդուսպ ոգին աւել էր Միքօյին:

Իր առաջին քայլը եղաւ քիւրդական անվերջ սովորական դարձած հայածանքներին ցոյց տւած յանկարծական դիմադրութիւնը: Մի անգամ հրացանը ձեռքին՝ նա էլ վար չդրեց. նա հայդուկ էր, նա յեղափոխական էր:

Քիչ յետոյ Միքօն յեղափոխական մի խմբի պետ է, փորձած և քաջասիրտ պետ. պարզ, միամիտ՝ այդ անվեհեր գեղջուկը իր հայրենիքի փրկութեան մոլեռանդ, անձուկը զինուոր դարձաւ, առանց քննելու, առանց դատելու, առանց որ և է յաւակնութիւնների, մի հատիկ միայն մտքով տարւած, վերացած, յափշտակւած, և այն՝ թէ ինչ և լինի, ինչպէս և լինի, պէտք է վերջ տալ իր եղբայրների անտանելի կացութեան, պէտք է փրկել տանջւած հայրենիքը: Եւ այդ սրբազան մտքի համար նա անում է այն բոլորը, ինչ որ նրան լաւ է թւում, կամ ինչ որ իրենից խեղճները նրան հաւատացնում են՝ թէ լաւ է, և անում է միշտ խելագար քաջութեամբ, ժողովուրդին յատուկ այն ազնիւ խելագարութեամբ, որ յաճախ աւելի արժի քան նուրբ իմաստութիւնը:

94. Թւին երկիրը զէնք տեղափոխող խմբի մէջ է Միքօն. հազիւ հայրենիք հասած՝ նա իր խմբով շրջում է գաւառները. ժողովուրդի որդին շրջում է ժողովուրդի մէջ՝ ասելու համար, թէ տե՛ս՝ քեզ համար եմ սար ու ձոր ընկել, քեզ համար եմ ամէն ժամ մահուան դէմ ճակատ դուրս դալիս, քո ցաւերն են ինձ տանջում, քո տառապանքները տանել չեմ կարողանում: այս է քո փրկութեան միակ ճանապարհը. վեր կաց, զէնք առ:

Այդ շրջագայութիւնն առանց ընդհարումների չէր իր ազգի թշնամիների հետ, իսկ այդ ընդհարումները Միքօի փոքրամիտ խմբին միշտ յաղթութիւններով պսակեցին. դա իսկապէս ոչ թէ պարզ շրջագայութիւն, այլ մի յաղթական գնացք էր:

94-ի աշնանը նորդուղ գաւառում Միքօն վրէժի ծրագիր ունի. նա փնտրում է Շաքիրին, այդ արիւնարբու գաղանին, և անշուշտ շարագործը նրա արդար վրէժխնդրութեան զոհ կը դառնար վերջապէս, եթէ աւազակները նախապէս լուր տւած չլինէին այդ աւազակին, որ տուն տեղ թողած փախստի է դիմում Միքօի գնդակներից փրկուելու համար:

96-ի գարնանը Միքօն արիւնահեղ ընդհարումներ ունի քիւրդերի հետ. նրա ամբողջ խումբը 3 հոգուց է կազմւած. թշնամիների ահագին բազմութեան առաջ նա տեղի չի տալիս. 3-4 ժամ տևող կռիւր խլում է նրանից նաև իր երկու ընկերներին. Միքօն միայնակ է շարունակում կռիւր՝ մինչև միւս ընկերների հասնելը. գիշերային խաւարի հետ միասին Միքօն անյայտանում է:

Աշնանը նա վան է 24 հոգով, ուր պահուում, պաշարուում է 10 օր, ապա կատաղի կռիւ մղում նոյնիսկ թնդանութների դէմ:

Խմբապետ Միքօին 97 թւին մենք տեսնում ենք Աբաղայի կուռում, իսկ այնուհետև վանի կռիւներում, որից յետոյ դարձեալ դուրս է գալիս գաւառները շրջելու:

Եւ այսպէս կռիւ, կռիւ, անվերջ կռիւ կամ՝ շրջագայութիւն գաւառներում: Միքօն կամ բռնութիւնը հարւածող արդարութեան և իրաւունքի վրժառու բողբոջ է, կամ տանջւած, բայց համբերող ժողովուրդին իր կենդանի օրինակով դէպի փրկութիւն հրաւիրողն է:

98 թւի յունւարին ժողովուրդի այս ընտիր զաւակի փոթորկալի կեանքը մտենում է իր վախճանին. հարիւր հոգուց բաղկացած տաճիկ զինուորների մի գնդով պաշարում է Միքօն Վազգէնի և Արշակի հետ. ըսկուում է անհաւասար կատաղի կռիւ, որ ունենում է շարաքաստիկ վախճան. դարձեալ երեք նահատակներ ցողում են իրենց սուրբ արեւնով ազգի փրկութեան սուրբ գործը:

\* \* \*

ԱՐՇԱԿ ԶԱԼԿԱՍԱՐԵԱՆ

Արշակ վանեցին 93 թւից յեղափոխութեան մէջ է: Զինուորի անձնիրութեամբ և առաքինութեամբ գործել է մեծ եռանդով: Մերթ իբրև հասարակ մարտիկ, մերթ իբրև խմբապետի օգնական՝ Արշակը եղել է միշտ մի յարգելի ուժ: 96 թւին մենք նրան տեսնում ենք Միքօի զինատար խմբի մէջ. այնուհետև շարունակ իր քաջասիրտ առաջնորդի հետ բուռն մասնակցութիւն է յանձն առել նրա յանդուգն քաջագործութիւնների մէջ: Կուռուբաշի շարաքաստիկ կռիւն էր վիճակած վերջ տալու այդ թանկագին կեանքին:

Հանգիստ ձեզ, քաջեր. հանգիստ, անմոռաց նահատակներ. ժողովուրդից ծնեցիք, ժողովուրդին զոհեցիք: Զեր ծնողի սրտի մորմօրը խոր է և նւիրական: նա իր հատուցումը կը պահանջի:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Զ Ն Կ Ա Յ Է Ն

4/16 փետրւար 99

Ձերբակալութիւններն ու բանտարկութիւնները ալ շատ սովորական նորութիւններ ըլլալուն, չեմ ուզեր կանգ առնել անոնց վօայ. կը բաւէ ըսել որ դատարանները կը շարունակեն իրենց գործը, վճիռ վճռի ետեւէն տալով բանտարկեալներուն նկատմամբ:

Քանի որ խօսքը բանտերու մասին է, յիշեմ վերջերս հոն պատահած դէպք մը, որ ուշագրաւ է հայերու և քրդերու փոխադարձ յարաբերութիւններու տեսակետէն: Ահա եղելութիւնը:

Բանտարկւած քիւրդ մը Գալուստ Արխանեանէն թախանձագին կը խնդրէ որ իր գործը պաշտպանելու համար փաստաբան մը գտնէ: Փաստաբանը կը կանչուի, սակարկութիւնը 2 ոսկով կը վերջանայ. մէկ ոսկին կանխիկ կը վճարուի փաստաբանին, մէկ ոսկին ալ պահ կը արւի Արխանեանին: Օր մը ետք քիւրդը զըջալով իր ըրած սակարկութեանը, Արխանեանէն կը պահանջէ ետ տալ իրեն 2 ոսկին ալ: Խօսքէն խօսք՝ կը ծագի ծանր վէճ մը, որ սակայն շուտով վերջ կը գտնէ բանտապահներուն միջամտութեամբը: Ասոր վրայ քիւրդերը խորհուրդ վճռեն որ լաւ ծեծ մը տան բոլոր հայերուն, և իրենց որոշումը կը գործադրեն միայնակ:

գտած բանտարկեալի մը վրայ: Ընկերոջ աղաղակները լսելով բոլոր հայ բանտարկեալները դուրս կը թափին և փառաւոր ծեծ մը քաշելով քիւրդերուն՝ կը քշեն կը տանին իրենց խուցերը: 5-6 քիւրդի գլուխ կտորած էին արդէն, երբ զինուորներու խումբ մը բանտը պաշարելով՝ քաղաքապետին առաջնորդութեամբ, հրացանները կուռնդներուն վրայ ուղղելով՝ կուրը դարբեցնել կը հրամայէ: Լսող չկար. քաղաքապետը կը հրամայէ հրացաններն արձակել, բայց բարեբախտաբար հազարապետը ներկայ չըլլալուն, քաղաքապետին հրամանը չի կատարելի: Վերջինս դուռները բանալ տալով համարձակ ներս կը մտնէ, կուրն պատճառն իմանալու: Կուրն ինքնին դարձած էր արդէն, որովհետեւ հայերը յաղթած էին, և բան մը որ ամէնէն ուշագրան էր, ան է որ այդ կուրն մէջ դեր սիմֆի քիւրդերը հայերուն կողմը բռնած են միւս քիւրդերուն դէմ:

Կուրը կը պատահի գիշեր ատեն յունւար 6/18-ին: Քիւրդերը հայերէն թուով մէկուկէս անգամ աւելի էին: Կառավարութիւնը անպատիժ թողուց այդ խառնակութեան պատճառ եղող քիւրդերը, բայց շղթայել տուաւ 3 հայ բանտարկեալներ, անոր համար որ քաղաքապետին ներս մտած միջոցին՝ հայերուն կողմէն քիւրդերուն վրայ նետած քար մը պատահմամբ քիչ էր մնացեր ոստիկանի մը գլուխը ջսխլախէր:

**ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԵՆ**

4/16 մարտ 99

Օրմանեանին «հաշտարար» քաղաքականութեան գեղեցիկ պտուղները քաղելու վրայ ենք ամէն օր: Պալատին հռչակած և պատրիարքին զմայլած «անդորրութեան» համն ու հոտը գաւառներէն հոս կ'անցնի կամաց-կամաց:

Հայերու դէմ խստութիւնը վերջին ծայր հասած է հիմա. ամէն շաբթու հայեր կ'աքսորուին. բաւական է որ հայ մը ընչին պատճառով բանտ իյնայ, և քսորի հրամանը կը հասնի ետեւէն: Միայն ուսմազան 15-ի առթիւ 20-էն աւելի հայեր քսորուած են. բանտէն նոր արձակուած մը պատմեց: Թէև Համիդը ցամաքէն չանցաւ Պոլիս Մարգարէին «խըրդան» համբուրել երթալու, բայց ուսմազանի առաջին օրէն մինչև 15-ը երկու կամուրջներուն տակ ալ ոստիկաններ խուճա-խուճա կը հսկէին օրն իբրև: Խըրդայի-Շէրիֆի օրն ալ նաւակներու անցուդարձը բոլորովին արգիլեցաւ, ինչպէս մինչև իսկ կամուրջներու մօտ ձուկ բռնելը:

Չկարծի թէ ուսմազանի առթիւ էին բոլոր այդ խստութիւնները, որոնք օր օրի կ'աւելնան, և որոնք այնքան ապուշ բաներ են, որ ծաղրելի պիտի ըլլային, եթէ ցաւալի չըլլային: Հայուն արգիլուած է ժամը 12-էն ետք նաւակ նստիլ, այնպէս որ եթէ գիւղաբնակ հայ մը վերջին շոգենաւը փախցնէ, ստիպուած է հիւրանոց երթալ կամ փողօցը մնալ: Հայուն արգիլուած է որ և է ընտանեկան տօնախմբութիւն կատարել կամ երեկոյթ սարքել:

Իրերու այս ծանր կացութեան մէջ մեր պատրիարքարանը շատ մեծ գործի վրայ է... Վանի կրօնափոխութիւններէն քաջալերուած՝ Ազարեանի ապուշ սանե-

րէն մէկը անլի գրքոյկ մը հրատարակած էր վերջերս հայերը պապականութեան հրաւիրող: Օրմանեանը, որ հոգով սրտով կը տենչար իր ասուածաբանական հրատուութիւններով պապանձեցնել այդ եռանդուն մարդորսները, ոչ լրագրական յօդուածի մը արտօնութիւն կը ցաւ ձեռք բերել և ոչ ալ տետրակ մը հրատարակելու յաջողիլ: Գոնդակ մը ցրելու տուաւ վերջերս եկեղեցիները. անոր ալ իմաստը օրմանական է, խեղճ ու կրակ բան մը:

Պատրիարքարանին բոլոր առաջարկները մերժուածի կը հանդպին, և պատրիարքն ալ իր բարկութիւնը... Ժողովրդին վրայ կ'առնէ, կառավարութեան քով վարկը բարձր ( ) պահելու համար: Միացեալ Ընկերութիւնները իղուր կը խնդրեն Օրմանեանէն հանգանակութեան համար ժապաւինեալ տետրակ կամ թատրօնի ու նւագահանդէսի արտօնութիւն. պատրիարքը կը մերժէ ու կը մերժէ: Իր բարեկամները արգարացնել կը ճգնին զինքը, քաղաքագէտ անւանելով իր վարմունքը, իսկ ծածուկ տեղեր ալ կը փսփսան թէ «ճիշդ լի թէ ան, և թողնելու է որ գիտցածը ընէ. վերջը կը հասկնանք բարին»: Այդ պարոնները բան մը միայն կը մոռնան, որ մեր թշնամին շատոնց է որ ալ ճիշդիթութիւնը մէկդի թողած՝ բացայայտ պատերազմ հրատարակած է մեզ դէմ. սուրը արդէն ելած է պատեանէն և իր գործը կը շարունակէ անդու... Պատրիարքը շատ, շատ խօսեցաւ՝ ճառ, քարոզ, ատենաբանութիւն, բայց օգո՞տը, ո՞ր է. ինչ եղաւ Սիսի կաթողիկոսական խնդիրը, որբերու համար համազգային հանգանակութեան առաջարկը, անմեղ բանտարկեալներու արձակումը, և այլն, և այլն:

Մաքերը սաստկապէս գրգռուած են պատրիարքին դէմ: Օրմանեանի դիրքը, որ արդէն խախուտ էր, կը մօտենայ տակաւ իր փլուզումին...

**ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱԹԻՒՐԻՔ ՍԱՀՄԱՆԱԳԼԻԹՅՈՅ**

3 փետրուար 99

Արդէն հաղորդել եմ ձեզ այն խստութիւնների մասին, որոնք արտայայտեցին 9 դիմակիրների բարբարոսական գլխատման գործում: Այժմ գրում եմ յաջորդող դէպքերի մասին, իսկպատի ունենալով մինչ փետրուար եկած անցածը: Դէպքի տպաւորութիւնը մեծ էր: Ճնցեց ոչ միայն Սալմաստի ամբողջ ժողովուրդը, այլև նոյնիսկ տեղական կառավարութիւնը, որ վախենում էր անգլիական հիւպատոսի միջամտութեան հետեւանքներից: Սակայն անցան օրեր շաբաթներ, ամէն ինչ վերջապէս հանդարտեց և ժողովուրդը դիմեց իր առօրեայ կեանքին: Մենք միայն, նահատակածների ճանաչողները, նրանց ընկերները, հանգրստութիւն չունէինք: Ընկածների պատկերները դեռ կենդանի էին բոլորիս առաջ և սուկայի վրէժ էին պահանջում, — վրէժ գոնէ այն դաւաճաններից, որոնք ամէնալիտի կերպով մորթելու և սուկում, մահ ու վտանգ արհամարհած մեր ընկերներից ամբողջ ինը հոգի... Մեր անելիքը որքան անխուսափելի, նոյնքան պատասխանատու էր: Այդ պատճառով տեղում ժողովուած տեղեկութիւնները կարկայացեցին Պարսկաստանի կենտրոնական կոմիտէի հայեցողութեան: Ձեզ արդէն յայտնի է, որ, Կենտրոնական կոմիտէի վճռի համաձայն, մատնիչներից երկուսը Ստեփան և Սուս Առաքել արդէն տէնօրի են ենթարկուած: Ստեփանը, իբր գիւղական յայտնի մատնիչ, յարաբերութիւն ունէր Սալմաստի կառավարիչ Հաջի խանի հետ և դէպքում մեծ դեր էր խաղացել: Սուս Առաքելը մի

սարսափելի փշացած արհեստաւոր էր. որ դէպքի ժամանակ «վալպրի» (ուղեցոյցի) դեր էր կատարել քիւրդ ձիաւորներին համար:

Մահուան այս պատիժները կրկին այլեկոնքին սմէն ինչ: Ժողովուրդը մի կողմից սկսեց վախենալ կառավարութեան խառութիւններէն նորագույնաց եւ միւս կողմից՝ ահաբեկիչներին սրից, որ այնպէս անխնայ կտրուել էր դաւաճանների մարմինները: Տեղական կառավարութիւնը նոյնպէս սարսափահար եղաւ. Հալի խանը մի տեղ նոյնիսկ ասել էր. «մի օր էլ ինձ այդպէս պիտի սպանեն»: Եւ միջնորդ էր գցել յեղափոխականների հետ հաշտելու համար: Հասկանալի է, որ այսպիսի հանգամանքներում ահաբեկիչներին դանակու փորձ էլ չարեաց: Դրա փոխարէն գիւղացիներին 250 թուան առան եւ լեռնային թէ որքան մեծ վընասներ կրեցին Մահլամի գիւղացիք եւ առհասարակ Մալմաստը մեր ընկերների սպանութիւնից — դրա մասին կարող են գաղափար տալ հետեւեալ փաստերը: Ամբողջ երեք տարի, մինչ զինակիրների նահատակելը, Մալմաստը երբեք ըստ բոլորի չէր տեսնու. նրանք ստակում էին «Ֆէրայի» անունից: Բայց այդ դէպքից յետոյ քիւրդերը սիրտ առան եւ, «Ֆէրայիներին» ջնջած համարելով Պարսկաստանում, սկսեցին գիշերները աւազակութիւններ անել: Մահլամ գիւղում մինչ այսօր 12-14 տուն են կողոպտել եւ 60-ի չափ ոչխար են փախցրել: Ցերեկայ երթեւեկութիւններն էլ են յաճախացել, եւ, ուղ գիտի, չեն նախապատրաստուում արգեօք դեռ նորանոր դժբախտութիւններ Մալմաստի համար...

Կառավարութեան ներկայացուցիչներին, որոնք այնքան անխիղճ դեր կատարեցին 9 զինակիրներին վերաբերմամբ, Հալի խանը, որ սկզբում հեռացրել էր պաշտօնից, կրկին ծառայութեան է կանչուել. իսկ Զարդամը (Մալմաստի եւ Սոյի ընդհանուր կառավարիչը) միայն վերջերս պաշտօնանկ եղաւ եւ այժմ Թաւրիզ է կանչուած բացասարութիւններ համար:

Մահմանական պարսկական առաջին քիւրդերի մէջ վերջին երեք ամիսները տեղի ունեցան մի շարք հետաքրքիր երեւոյթներ, որոնցից յիշատակենք յայտնի ցեղապետ Զաֆար աղայի արիւնահեղ ընդհարումները Մահլամը աղա ցեղապետի հետ եւ Դերիկի մտերմութեամբ բնակւող Ամիր-Ջամիլին ցեղապետի սպանութիւնը մի ուրիշ քիւրդի ձեռքով: Այս ցեղապետներից առաջինը՝ Զաֆար աղան՝ 97 թիւն Սանաասօրի արշաւանքի ժամանակ օգնութեան էր գնացել Եւրաֆիս եւ մի վէրք էր ստացել ճակատին, սակայն այժմ ուրիշ քիւրդ ցեղապետների հետ դժգոհութիւններ ունենալու պատճառով հայերը հետ աւելի հաշտ է, քան եղել է երբեք: Սպանուած Ամիր-Ջամիլին այն ցեղապետն էր, որ 96 թիւն Դերիկում կռի էր բռնել մեր խմբապետ Դուրմանի մարդկանց հետ. այդ կռոււմն էր, որ, ինչպէս յայտնի է, զուեց ժողովրդական հերոս Եերոն:

**ԴԱՅԱՍՏԱՆԵՆ ԵՎԱՅԻՆԱՍՏԱԿՆԵՐ**  
(Journal de Genève, 4 ապրիլ 99)

Վան, 6 փետրւար 99  
Գիւղերը բնակողներուն վիճակը իրապէս զարհուրեցիկ կը դառնայ: Հայոց յանձնաժողովը, որ իր տրամադրութեան տակ ունի որոշ գումար մը, խնդրեց մեզմէ շարունակել գործել իրենց հետ: Ընդունեցինք այդ առաջարկը, թէև ատով զգալապէս կ'աւելնան մեր ծախքերը, որոնք արդէն բաւական ծանր էին. երջանիկ էինք տեսնելով անոնց մեզ նկատմամբ տածած վստահութիւնը: Յորդորեցինք որ իրենք յատկապէս աւելի զբաղին գիւղերով, մինչդեռ մենք կարելին պիտի ընենք որպէս զի քաղաքին մէջ անօթութենէ մեռնող չըլլայ:  
Օրապահակ կը բաշխենք անօթութենէ տառապող բոլոր մանուկներուն — որք ըլլան թէ ոչ —, մտ

Հազար հոգի քաղաքին մէջ և առողջ անձերուն ալ հիւսելու գործ կուտանք: Ասոնցմէ զատ, մենք հարկադրուած ենք օգնելու հիւանդներուն և ամէն անոնց որոնք ապրուստի ոչ մէկ աղբիւր ունին: Թշուառութիւնը ահռելի պիտի ըլլայ մարտ և ապրիլ ամիսներու մէջ: Բոլոր պաշարները պիտի սպառին և կարելի չպիտի ըլլայ տակաւին դաշտերուն մէջ հաւաքել ոչ արմատ և ոչ ալ խոտ:

Վան, 19 փետրւար  
Լուրջ քննութիւն մը հաստատեց գիւղերուն մէջ ահռելի թշուառութեան մը գոյութիւնը: 12,000 հոգի մնունդէ զուրկ են, և ասոնց թիւը պիտի աւելնայ դեռ երեք ամսուան մէջ: Մարդ-գլուխ օրը մէկ սու պէտք է զարի գնելու համար:

Վան, 20 փետրւար  
Մեր քննիչները վերադարձան Թեմարէն և կը հաղորդեն թէ բազմաթիւ տուններու մէջ կտոր մը պաշար չէ մնացեր. մարդիկ կը կերակրուին թեփով կտաւատով: Հատկապէս մեռած են սովէն և ծիրուհիներ: Հայոց յանձնաժողովը հեռագրեց պատրիարքին, անգլիական հիւսաւտոսը դեպքանատան և ես ալ Պօլսի յանձնաժողովին դրամ ստանալու համար: Կարգադրութիւններ ըրի սերմնացու և տաւար հայթայթելու համար քանի մը գիւղացոյց. իրենց հունձքին կէսը մեզ պիտի տան ասոնք, որով օժանդակութիւն մը պիտի ըլլայ մեր որբանոցներուն: Մեր վիճակը ստեղծել է:

Մարաշ, 14 փետրւար  
Զէյթունի փողոցները լցած են սոված մարդերով, որոնք շրջակայ գիւղերէն կուգան, և թշուառութիւնը նկարուած է իրենց դէմքերուն վրայ: Չափազանցութիւն չէ եթէ ըսենք որ 1,000 հոգի Զէյթունի մէջ և 2,500 ալ մերձակայ գիւղերը իսպառ զուրկ են սնունդէ: Մէկ ամսէն անոնց թիւը պիտի կրկնապատկի, և երկու ամսէն աւելի գէշ պիտի ըլլայ: Ատկէ զատ, այս մարդիկը գործ չունին. կ'ուզէինք զբաղուիմ տալ անոնց:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԿՐԷՏԵԻ ՄԷՋ**

Որքան շուտ դէպի քայքայումը կը դիմեր կղզին բնակալ ռէժիմին ներքեւ, այնքան աւելի արագ կը վերածնի իր աւելանքներէն այսօր, երբ երկին վարչութեան գուխը կը գտնուին իբր ծօրկիօսի խորհրդականներ Կրէտեի այն զաւակները, որոնք դեռ սարի մօտ առաջ «խառնակիչներ» կը նկատուէին Կանէան ուղարկող պետութիւններուն կողմէն:  
Բայց ո՞վ քսու թէ դիւանագետները չեն ամէնէն արտառոց կերպով հակասողները... Անոնքնը:  
«Սուալին քանը որ պէտք է Կրէտէին կարգուկանսօսի արագ հաստատումն է եւ այդ նպատակով է որ փութով առաջ կը մղեն նախապատրաստական աշխատանքները,» կ'ըսէր Ծօրկիօս հազիւ երկու ամիս առաջ, եւ այսօր Կրէտէն ունի արդէն իր Սանիմաւրութիւնը, որ Ազգային ժողովին մէջ յողւած առ յողւած քննուել ետք, կըսպասէ նմանակալ չորս պետութիւններուն վաւերացմանը:  
Կրէտէի ծախտագիրը այսօր աւելի շահեկան կը դառնայ մեզ համար. եւ իրաւամբ. եթէ առաջ արտաբերող մտաւանդութեամբ կը հետեւէինք այդ աննկուն ժողովողին իր ազատունի համար զորժ զրած անսխալ միգրու դիւցազներգին, այսօր սլ աւելի ուշադրութեամբ շահագրգռելու ենք իր նոր

կացութեամբ, որ իր նմանութեան բազմաթիւ կէտերով գործնական հետեւութիւններ կրնայ ունենալ նաեւ մեր դատին համար:

Գծբախտաբար ձեռքի տակ չունինք այդ Սահմանադրութեան քննարկը, եւ ստիպւած ենք շատանալ եւրոպական լրագրութեան մէջ հրատարակած ամփոփումովը: Մենք առաջ կը բերենք հոս աչքի գարնող մասերը միայն:

Սահմանադրութիւնը խճագրւած է, կ'ըսէի, չէլէնականին եւ Արեւելեան Ռումէլիոյ կազմական կանոնադրին համեմատ, քայքայ աւելի պահպանողական ոգով: Այդ բայց կ'ըսուի մասնաձեւութիւն առթիւն հանգամանք մը ունենալ, եթէ միայն կանխաւ յայտնի չեզուար որ այդ թուովը կազմութեանը օտարներ չեն, այլ Կրէտէի ամէնէն յարգելի եւ հմուտ մարդիկը — քրիստոնէսայ թէ՛ մահմեդական — եւ եթէ Կրէտէի մասին իշխանին հետեւեալ դիտողութիւնը իրականութեան քիչ մը մօտիկ չըլլար. «իմ կարծիքով երկրին ոգին պահպանողական է»: Կը հաւատեն իսկ թէ Ազգային ժողովը շատ քիչ փոփոխութիւններ մտող քայլ ծրագրին մէջ, եւ ինչ որ յայտնի է մեզ այդ փոփոխութիւններէն՝ պատահաբար կրնայ բերել իրեն: Ծրագրերը իշխանին իրաւունք կուտար՝ ժողովուրդին կողմէն ընտրւած պատգամաւորներէն զատ, իր ընտրութեամբ 10 հոգի եւս մտցնել Ազգային ժողովին մէջ: Այլ «անխախտ»-ները ծերակցոյի դերը կ'ըսւած էին կատարելու ծրագրին հեղինակներու կարծիքովը: Ազգային ժողովը մտիկ ընել շուրջ քուրք ատարկութիւնները եւ իր բոլոր վստահութիւնը յայտնելով հանդերձ իշխանին, չ'ընէր տուաւ այդ յօդուածը:

Սահմանադրութեան ծրագրին հեղինակները եւ Ազգային ժողովը կարելին ըրած են արդար գտնելու համար իրենց արիւնականից մահմեդականներու նկատմամբ եւ ջանադէր միանգամայն անոնց դիւրազգայութիւններուն չ'ապշելու:

Գործախի բնականութիւնը պիտի վարէ իշխանը իր կողմէն ընտրւած հինգ պատասխանատու նախարարներու կամ, ինչպէս Սահմանադրութիւնը կ'անուանէ, «խորհրդակցականներ» միջոցով. այդ խորհրդակցականներէն մէկը մահմեդական պիտի ըլլայ անպատճառ: Համեմատութիւնը ճշդիւ պահպանւած է ուրեմն, մահմեդականները կը գինին քննադրութեան մէկ հինգերորդը կազմելուն:

Բայց ամէնէն աւելի քննորշ է այդ տեսակէտէն Սահմանադրութեան 11-րդ յօդուածը եւ այդ առթիւ ժողովին մէջ ծագած վէճերը: Այդ յօդուածը կրօնի կատարեալ ազատութիւն կը հռչակէ, արգելելով միայն մարդոսութիւնը (rosaklyisime): Քրիստոնէսայ պատգամաւոր մը ամնթ (°) համարելով ժողովին այդ աստիճանի հաշտարար ոգին, առաջարկեց որ երկրին պաշտօնական կրօնը յունականը հռչակուի: Բուն վիճաբանութիւն մը փրթաւ. մահմեդական պատգամաւորները ընկալաւորաբար ընդդիմացան այդ փոխառաջարկին, եւ իրենց հետ նաեւ քաղմածի քրիստոնէսականներ: Երկար հակամարտէրէ ետք ժողովը 188 ձայնով 22-ի ղէմ մերժեց այդ փոխառաջարկը:

Նոյն ոգով ներշնչուած երկրորդ նշանաւոր գիշուր մը ըրաւ ժողովը քաղձ քաղձ ընտրութեան առթիւ: Ծրագրին համեմատ իշխանը իր «...»-ը պիտի ունենար անւանել եւ պաշտօնէ հանել ամէն կարգի պաշտօնատարներ, ասոնց մէջ նաեւ քաղձ ընտրու ու միւլի ֆիլիսթին երբ: Սահմեդականները խնդրեցին փոխել այդ յօդուածը, քանի որ իրենց կրօնական կանոններու արամադրութեան համաձայն՝ շէյխ-իւլ-իսլամին, կը պատկանի քաղձներու եւ միւլի ֆիլիսթին ընտրութիւնը: Ժողովը համաձայնեցաւ եւ այս անգամ մահմեդական անդամներու պահանջին եւ որոշեց քաղձ ընտրու ու միւլի ֆիլիսթին երբ նմանցնել Կրէտէի մտարագլոյթին եւ կոփիկոպոններուն, որոնց ընտրութիւնը իշխանը պարզապէս վարեցաւ միայն կրնայ:

Մահմեդականներու կրօնական զայրուանքներուն նկատմամբ նոյն յարգանքն է որ թուրքիւրազ է Ազգային ժողովը շէյխի կրօնական ատենաներուն նմոտակի մահմեդականներու միջեւ ծագող դատերու այն մասը, որ կը վերաբերի կտակներու, ժառանգութեան, ամուսնութեան եւ այլն:

Ազգային ժողովին այդ հետեւական վարմունքը պերճախօս փառտ մըն է կրօնացոյց քաղաքական հաստնութեան եւ միայն նպատակ կրնայ խաղաղութեան վերականգնմանը իրենց քաղաքական փոփոխակից կեանքին մէջ:

Պէտք է խոստովանուի որ Եօրիկոս իշխանն ալ իր խոսքում ու շրջանայեաց ընթացքով քիչ չնպատեց այդ հաշտարար ուղղութիւնը շեղուելու: «Երբ մէկը կը կատարէր, զատ, իր վարձուձի կրօն ունենալով. արդարութիւնն ու հաւաստութիւնը ամէնուն համար, ոչ մէկ դժարութեան չի քաղնիր իր պարտականութիւնը կատարելու ասան»: Իր գործերը խօսքներուն չհակասեցին. կ'արժէ իշել որ Եօրիկոս յատուկ պատգամաւորութիւն խրկեց միշտ անգամ Կանդայի Թիւրք հասարակութեան քով, համագելու համար որ աներկապ վերադառնան իրենց թողած գիւղերը եւ չխորհին գաղթելու մասին, խոստա-

նալով դրամական նպաստներ իսկ հայթայթել քանդած տուներու վերաշինութեան համար:

Եօրիկոսի խոհեմութիւնը, Ազգային ժողովին անաչառ դիրքը հաւանորէն պիտի բաւէին շուտով անդորրութիւն բերելու այդ խոռով եւ քննող հոգիներու մէջ, եթէ միայն սուլթանին ուժ-ժիւղին հետ, սուլթանին խաւարին դուռն ալ անհետացած ըլլային կղզիէ: Սնվիական թիւթերը եւ հաւաստեն թէ թիւթը կատարարութեան գաղտնի պատուիրակներ եկած են գործելու մահմեդականները, որ չհաշտուին իրերու արդի կացութեան հետ: Եթէ այդ սաղբանքներուն լսէին մահմեդականները՝ Ազգային ժողովին ալ չպիտի մասնակցէին, քայքայ տեղը է ուրախանալ որ այդ անմտութիւնը չգործեցին: Մահմեդականները պիտի ըմբռնեն շուտով — եթէ միայն ղեկ կտանած չեն — թէ ինչ է իրապէս այդ պատուիրակներուն հետապնդած նպատակը: Գաղթէն տալ. քայքայ ղեկ ամեններ առաջ էր որ չուզէ, իգմիր, Սալթիկ եւ Թիւրքիոյ այլ կողմերը գաղթած ինչնց եղբայրները Եօրիկոսին կը ղեկէին յայտնելով թէ կը հաւատան իր տուած հաւատարմութեան եւ թէ անհնար պիտի վերադառնան իրենց թողած տուն-տեղը, խաղաղութիւնը եւ կարգը վերահաստատուելուն: պէս: Այդ մարդիկը շատ շուտ շտեր էին այն անուղիղ, որ կը բացէր իրենց յարաւտելի նկրտած ղեկիցն եւ Կրէտէի նորահաստատ վարչութեան միջև: Ամիս մըն ալ շանցած իրենց ամտի եղբայրները իգմիր, Սկալայսօվայի եւ Կարաբունարի մէջ աւազակութեան ղեկները կը հարկադրէին, ապրուստի միջոց մը գտնելու համար... Քաջակերտ չեն այս իրողութիւնները... Եթէ գաղթելը անմտութիւնն է, ամէնէն մեծ տնկարութիւնը պիտի ըլլար զործիք դառնալով սուլթանին խարդալանքներուն կատարած իրողութեան ղէմ կողմ, փոխանակ իրենց հայրենիքին վարչութեանը աշխատելու:

Պէտք է յուսալ սակայն որ սառն դատողութիւնը եւ իրենց շահերուն ճշմարիտ գիտակցութիւնը, որ քիչ անգամ պակաս է գիւղացի տարրին, շուտով պիտի կարենան խորտակել ու փշրել սուլթանին բոլոր նենգութիւնները, եւ Կրէտէի մահմեդականները պիտի կարենան ազատութեան բարիքները վայելել իրենց քրիստոնէսայ հայրենակիցներուն ազատութիւնն ալ յարգել ստրկելով:

Կրէտէի նորոգ վարչութեան այս փորձը անհունապէս կարեւոր եւ շահեկան է մեզ հայրուս համար: Եւրօպական բոնթիթովի տակ, ընտրական սեղաններ քրայ հիմունք ագատական վարչութիւն մը, ուր փոքրամասնութեան շահերը նոյնքան պաշտպանուին, որքան նաեւ մեծամասնութեանը — իրականացնելու ձեռնարկած վարչական այդ սխտեմը կը մտնուի դաշնակցական հիմքու վրայ դրած այն ծրագրին, որ մենք սեղանի իմը միակ գործնական միջոցը ցոյց տուած ենք Փոքր Ասիոյ մէջ մեր եւ մեր դրացի ցեղերու շահերն ապահովելու կարող:

Չափազանց նշանակիչ է այն պարագան որ Եւրօպան, թէեւ քիչ մը ուշ, քայքայ եւ այնպէս իրողութիւններու անողոք տրամաբանութենէ մը մղւած, այդ միակ գործնական ուղին ընտրեց Արեւելեան խնդրին հանգուցներէն մէկը լուծելու համար: Առաջին քային էր դժարը:

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԿՕՄԻՏԵՆ ՉԵՐՁՐՆ ԾԱՅՏԱՍՏՐԱԿՐԸ

Մակեղոնական Գերագոյն Կոմիտէն Կրէտէի ազատումը առիթ բռնելով յայտարարագիր մը ուղղած է վերջերս մեծ պետութիւններուն: Շէշտելով Կրէտէի խնդրին կարգաւորման մէջ ինկատ առնւած երեք սկզբբունքները՝ եւրօպական միջամտութիւն, քաղաքական ինքնավարութիւն եւ կեդրոնական իշխանութեան յանձնաժողովը ազգաբնակչութեան մեծագոյն մասին վստահութիւնը վայելող անձրու, այդ նոյն երեք սկզբունքներու կիրառութիւնը անհրաժեշտ կը նկատէ Մ. Գ. Կոմիտէն Թիւրքիոյ մէջ կատարելիք ամէն իրական բարենորոգումներու համար:

Քաղաքակիրթ աշխարհին մարդկայնական զգացումներուն կոչ մը ընելէն ետք որ մակեղոնական խնդրին շուտափոյթ լուծում մը տրւի, առանց տառապող ժո-

ղովորդին արիւնը թափել տալու իզուր, Մ. Գ. Կովտէն առաջ կը բերէ բարենորոգումներու իր նախագիծը, որ վաւերացած է Մակեդոնական Համաժողովին կողմէն 1896 նոյեմբերին:

Ահա՛ այդ նախագիծը.

1. Սալօնիկի, Մանասորի եւ Իւսկիւրի արդի վիլայէթներէն կազմել Նահանգ մը, Սալօնիկն ունենալով վարչանիստ (Բնագիրը առաջ կը բերէ հոս աշխարհագրական սահմանները):

2. Նահանգին տիրապետող ազգութիւնէն, 5 տարի ժամանակով նշանակել իբր Ընդհանուր Նահանգապետ շտապ եւ թոյլատու ոգով անձ մը:

3. Ընդհանուր Նահանգապետը պիտի վարէ նահանգը ժողովրդի կողմին ուղղակի ընտրած ներկայացուցիչներու Ընդհանուր ժողովի մը օգնութեամբ, փոքրամասնութեան իրաւունքներն ալ միանգամայն երաշխաւորելով: Այդ ժողովն իր կարծիքը պիտի յայտնէ նահանգին ներքին վարչութեան վերաբերեալ բոլոր խնդիրներու մասին:

4. Երաշխաւորել ազդեալէս եւ գոհացուցիչ կերպով Նահանգին անխտիր բոլոր բնակիչներուն բնակարանի անրոնաբարութիւնը եւ անձնական ազատութիւնը: Սահմանել մամուլի գրաքննութիւնը:

5. Բոլոր պաշտօնատարները նշանակել իւրաքանչիւր տեղին մէջ տիրապետող ժողովրդին մէջէն: Բարձրագոյն պաշտօնակալները պիտի անւանին սուլթանին կողմէն Ընդհանուր Նահանգապետին առաջարկին վրայ: Իսկ երկրորդականները վերջնիս կողմէն ուղղակի:

6. Նահանգին գլխաւոր լիզուները ընդունիլ թիւրքերէնին հաւասար նահանգին բոլոր հաստատութիւններուն մէջ, ազատ ընտրութիւն թողնելով վարչական միութիւններուն գործածել իրենց պաշտօնական յարաբերութիւններուն մէջ այդ լիզուներէն որն որ ուզենան:

7. Քրիստոնեայ այլեւայլ ազգութիւնները իրենք պիտի կազմակերպեն իրենց դպրոցները, առանց Նահանգին վարչութեան կամ ո՞ր եւ է մարմնի միջամտութեան:

8. Հանրային անդորրութիւնն ու կարգը պահպանելու համար կազմել միլիտական (milice) մարմին մը Նահանգին մէջէն զինուորագրած: Մարմինը ուղղակի պիտի դուրս Ընդհանուր Նահանգապետին հրամաններուն ներքեւ: Այդ միլիտին ամբողջը պիտի կազմէ այլեւայլ ազգութիւններու բնակիչներու թւին համեմատ, այդ մարդոց թւին առաւելին հարիւրին մէկ: Աւագ սպաները պիտի անւանին սուլթանին կողմէն Ընդհանուր Նահանգապետին առաջարկին վրայ, միւսները ուղղակի երկրորդին կողմէն:

9. Ընդհանուր ժողովը պիտի որոշէ Նահանգին բիւջէն եւ հարկերը: Հասոյթներուն քառորդը պիտի յանձնի Պետութեան ընդհանուր դանձին, կայսրութեան պէտքերուն համար. մնացորդը պիտի յատկացուի Նահանգին պէտքերուն:

10. Ընդհանուր Նահանգապետին հետ նոյն աստիճանի կարգել յատուկ յանձնաժողով մը, ուր բնիկ ժողովուրդները առատ կերպով ներկայացած ըլլան, Ընդհանուր Նահանգապետին նախագահութեան ներքեւ մշակելու համար մտցնելիք բարենորոգումներուն մանրամասները:

11. Ընդհանուր ներում քաղաքական բոլոր բանտարկեալներուն եւ բոլոր նոգեհներուն:

12. Նոյն բարենորոգումները մտցնել Ադրիանուպօլսի վիլայէթը:

Մակեդոնական այս ծրագիրը, որ մշակած է վաւերացած է 1896-ի նոյեմբերին, նմանութեան բաղձաթիւ կէտեր ունի այն շրջաբերականին հետ, որը Իւզնակցութեան Կ. Պօլսի Կեդր. Կովտէն վեց մեծ պետութիւններու զբսպաններուն ուղղեց 1896 օգոստոս <sup>14</sup>/<sub>26</sub>-ին: («Իրօշակ», 3 սեպտ. 1896, № 20):

Այս նմանութիւնները կ'ապացուցանեն պարզապէս թէ

որքան ընդհանուր են թիւրք բռնապետութեան տակ հեծող ժողովուրդներու ցաւերը, երբ այդքան համանման դարմաններ կ'առաջարկին այդ ժողովուրդներու դատը պաշտպանող յեղափոխական այլեւայլ մարմիններու կողմէն:

Ֆինլանդիան ՄԻ ՄԵՂ

«Երբ մի ազնիւ մարդ մեռնում է, գրում էր վերջերս մի եւրոպական լրագիր, բարեկամները ողբում են նրա մահը, բայց երբ տեղի է ունենում մի ազգի վախճան, ամբողջ մարդկութիւնն է, որ պիտի ողբայ:»

Հարցը Ֆինլանդիայի մասին է, որի ինքնուրոյն քաղաքական գոյութիւնը ռուսաց կառավարութիւնը ոչընչացրեց գրչի մի շարժումով փետրուարի <sup>3</sup>/<sub>15</sub>-ին:

1809 թւին, ռուս-շվեդական պատերազմից յետոյ, Ֆինլանդիան միացաւ Ռուսաստանի հետ՝ այն պայմանով, որ անձեռնմխելի մնան նրա դարաւոր արտօնութիւնները: Նոյն թւին Ալեքսանդր I ազգային ժողով գումարեց Բօրգօյում և, ինքն անձամբ գնալով ժողովի նիստին, ստորագրեց «Երաշխաւորութեան թուղթ»-ը, որի մէջ նա յայտնում է հետեւեալը.

«Մենք կամեցանք այս թղթով հաստատել եւ վաւերացնել այս երկրի կրօնը եւ հիմնական օրէնքները, ինչպէս եւ այն արտօնութիւնները եւ իրաւունքները, որ համաձայն սահմանադրութեան վայելում էր մինչեւ այժմ այս մեծ դքսութեան մէջ ամէն մի դասակարգ առանձին եւ ամբողջ ազգաբնակչութիւնը ընդհանրապէս: Մենք խոստանում ենք պահպանել բոլոր այս առանձնաշնորհումները եւ օրէնքները հաստատ եւ անխախտ իրենց ամբողջ զօրութեան մէջ:»

Նոյնպիսի խոստումներ տւել են Ֆինլանդացիներին նրա բոլոր յաջորդները և ինքը Նիկօլայ II, 1896-ի նոյեմբերի 6-ին, ստորագրել է նոյն խոստումը, որի պատճէնները ամէն մի ցարի ստորագրութիւնից յետոյ կ'պցընուում են Ֆինլանդիայի բոլոր եկեղեցիների պատերին:

Շնորհիւ այդ առանձնաշնորհումների՝ Ֆինլանդիան մի սահմանադրական օազիս էր ներկայացնում ռուսաց լայնատարած միապետութեան մէջ:

«Տւէք ինձ անապատ և տւէք ինձ ազատութիւն, և ես դրախտ կը դարձնեմ անապատը» — բացառանշում էր մի ժամանակ իտալացի մեծ հայրենասէր հայր Գալաացին: Եւ Ֆինլանդացիք դրեթէ դրախտ էին դարձրել իրենց անհիւրընկալ հայրենիքը, այդ «հազար լճերի երկիրը»: Ուր ջրից ազատ տեղերը ինձ լերկ ժայռեր են միայն: Ազատ Ֆինլանդացու ազնիւ աշխատանքը ծածկել էր այդ ապառաժները ամէն աիւտ եւ սիվ մշակութեամբ և շրջապատել այդ լճերը ժողովուրդական ուսումնարանների ահագին ցանցով: Եւ մինչ Ռուսաստանում փակում էին դպրոցները և բազմացնում գիւնետները, Ֆինլանդիան ոչնչացնում էր իր սահմանում հարբեցութեան վերջին հետքերը և իրագործում էր համազգային գրագիտութեան՝ բուն Ռուսաստանի համար դեռ երկար ժամանակ անմատչելի իդէալը:

Երևի հէնց դրանում էր Ֆինլանդացիների մեղքը, որովհետև Ֆինլանդացիք, սկսած իրենց միացման օրից, մշտ ցոյց են տւել իրենց՝ ամենահաւատարիմ և օրինապահ հպատակներ ռուսաց ցարի:

Բայց վաղուց յայտնի է, որ գայլի ախորժակը բաց

ւելիս՝ գառը միշտ մեղաւոր է դուրս գալիս: Եւ մի քանի տարի է արդէն, որ Ֆինլանդացի հայրենասէրները տխուր նախազգացութեամբ ականջ էին դնում կատակովի և Պօբեդօսոցեվի սև դպրոցին պատկանող ուսուցիչներին ազգասէրների ատամների կրճտոցին, թէև ոչ ոք չէր կարծում, թէ այդքան շուտով է գահավիժւելու թշուառ Ֆինլանդիայի գլխին մարդատեցութեան, եղիտութեան և բռնակալութեան թուխպերում պատրաստող ահուկի շանթը:

Սև օր էր Ֆինլանդիայի համար փետրւար 3/15-ը, երբ Նիկոլայ II ստորագրեց իր օրհասական ուկազը, որով վերացուում է Ֆինլանդական Սահմանադրութիւնը:

Մինչև այժմ, այդ Սահմանադրութեան համաձայն, Ֆինլանդիայի Մեծ Գուբըն այսինքն ուսուց կայսրը, չէր կարող ոչ նոր օրէնք հրատարակել Ֆինլանդիայի համար, ոչ էլ վերացնել այնտեղի որ և է օրէնք՝ առանց Ֆինլանդական Ազգային Ժողովի (լանդտագ, սէյմ) գիտութեան և համաձայնութեան:

Այսուհետև, վերոյիշեալ հրովարտակի համաձայն, Ֆինլանդիայի համար օրէնսդրութեան վերաբերմամբ գործ է դրւելու նոյն կարգը, ինչ որ կայսրութեան միւս մասերի համար, այն տարբերութեամբ միայն, որ երբ օրէնքը հրատարակէ ամբողջ կայսրութեան համար, այն ժամանակ կը պահանջւի Ֆինլանդական սենատի կարծիքը, իսկ եթէ օրէնքը հրատարակւելու լինի միայն Ֆինլանդիայի համար, բայց վերաբերի համապետական շահերին կամ կապ ունենայ ամբողջ կայսրութեան օրէնսդրութեան հետ, կը պահանջւի և Ֆինլանդական Ազգային Ժողովի կարծիքը: Երկու դէպքումն էլ այդ կարծիքները, որոնք ոչ ոքի համար պարտադիր չեն, կը հաղորդեն ուսուց Պետական Խորհրդարանին, ուր օրինագիծը քննելուց և քեզարկւելուց յետոյ կը հաղորդւի Իհայեցողութիւն կայսեր, որ ազատ է հաստատել կամ չհաստատել օրինագիծը:

Այդպիսով Ֆինլանդիայի Ազգային Ժողովը, որ մինչև այժմ օրէնսդրական մարմին էր, ինչպէս եւրոպական սահմանադրական տէրութիւնների պարլամենտները, այսուհետև դառնալու է մի սոսկ խորհրդակցական մարմին Պետական Խորհրդարանի վերաբերմամբ, որ ինքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի խորհրդակցական հաստատութիւն միահեծան միապետի տրամադրութեան տակ: Ուրիշ խօսքով՝ Ֆինլանդական սահմանադրութիւնից այսուհետև մնալու է միայն մի սուեր, նոյնպիսի ողորմելի մի բան, ինչպէս թիւրքահայերի Ազգային Սահմանադրութիւնը:

Ֆինլանդացի Ժողովուրդը չէր կարող չզգալ այդ, և փետրւարի 6/18-ին, երբ կայսերական գուժաբեր հրովարտակը հրատարակեց Հէլսինգֆօրսում, ամբողջ Ֆին ազգը ցնցւեց մի մարդու պէս:

Ազգային Ժողովը և սենատը շտապեցին պատգամաւորներ ուղարկել կայսեր մօտ խնդրելու, որ նա փոխի իր վճիռը, բայց կայսրին շրջապատող մարդիկ թոյլ չտուին, որ պատգամաւորները ներկայանան նրան:

Մի երկրորդ, աւելի հանդիսաւոր պատգամաւորութիւն ևս ուղարկեց՝ բաղկացած աւելի քան 150 ինտելիգենտ անձերից և 400 գիւղացիներից, որոնք ընտրւած էին ամէն մի դասակարգից և իւրաքանչիւր համայնքից: Բայց այդ պատգամաւորութիւնն էլ, որ ներկայացնում էր մօտ 2,500,000 հաւատարիմ և օրինա-

սէր հպատակներ, նոյնպէս չկարողացաւ մատուցանել կայսեր Ժողովրդի խնդիրը և արտաքսւեց մայրաքաղաքից ոստիկանական միջոցներով:

Այդ պատգամաւորութիւնը տանում էր կայսեր ներկայացնելու 523,000 ստորագրութեամբ մի խնդրագիր, որ սպաւած է եւրոպական լրագիրներում:

Ինքը ճշմարտութիւնն է, որ խօսում է այդտեղ Ֆին Ժողովրդի բերանով, բայց պէտք է կարծել, որ ճշմարտութեան այդ աղաղակն էլ կը մնայ «ձայն բարբառոյ» ուսուց բարձր բիւրօկրատիայի բարոյական անապատում, որի խորշակը չորացնում է ազատ մտքի և ազնիւ զգացմունքի ամէնաչնչին ծիւրը ամէն տեղ, ուր նա կարողանում է հասնել:

Այդ՝ Պօբեդօսոցեվի գաղափարներով սնւած՝ բիւրօկրատիայի գործն է անշուշտ Ֆինլանդիան քաղաքականապէս մեռցնող հրովարտակը, և նա անկասկած ամէն ջանք գործ կը դնի, որ երիտասարդ կայսրը չկարողանայ զգալ, թէ ինչ դահճի և այն՝ երգմնագանց, ուխտագրութ դահճի գեր են կատարել տալիս իրեն իր անարժան խորհրդականները:

Ֆինլանդացիք լաւ գգում են այդ: Ամբողջ Ֆինլանդիան սգի մէջ է: Temps-ի թղթակիցը այսպէս է նկարագրում իր բարեկամ ճանապարհորդի տպաւորութիւնները:

«Նա դտայ ամբողջ դիւղը խորին սգի մէջ, լուռ՝ ինչպէս մի գերեզմանատուն. եկեղեցին սեւով էր պատած: Նոյնիսկ մի քանի տների պատուհաններում երևում էին սեւ դրօշակներ, երեսաները աղմուկ չէին հանում, չէին խաղում...»

Նոյնն է կատարւում Revue de Paris-ի ասելով երկրի բոլոր կողմերում:

«Կայսերական հրովարտակի հրատարակման հետևանք կիրակին, գրում է այդ հանդէսի աշխատակիցը: Ֆինլանդիայի բոլոր եկեղեցիները մի լռելեայն համաձայնութեամբ հսկում կատարեցին ինչան ազգային սգի: Այդ օրից յետոյ կանայք Հէլսինգֆօրսի փողոցներում պտտում են սեւեր հագած՝ իբրև որբեր եւ այրիներ, եւ բոլոր սօսխաժառութիւնները, բոլոր զւարճութիւնները դադարել են...»

Բայց դարերով ազատ ապրած ազգին վայել չէ միայն լալ, երբ բռնակալութիւնը դնում է իր լուծը նրա վզին: Եւ Ֆինլանդիան ոչ միայն ողբում է, այլ և ցոյց է տալիս եռանդի ու քաղաքացիական քաջութեան ոգևորիչ օրինակներ և տրամադրութիւն՝ թանկ գնով ծախել իր ազատութիւնը:

Մենք յիշեցինք արդէն համազգային խնդրագրի մասին: Այդ խնդրագիրը կազմեց փետրւարի 8/20-ին Հէլսինգֆօրսում գումարւած ահագին միտինգում: Բայց դա պէտք է լինէր դիմում ոչ միայն Ֆինլանդիայի մայրաքաղաքի բնակիչների կողմից, այլ ամբողջ Ժողովրդի բերանից: Անհրաժեշտ էր ամբողջ Ժողովրդի համաձայնութիւնը, իսկ ժամանակը թանկ էր: Եւ ահա Ֆին ինտելիգենցիան ցոյց է տալիս հերոսական եռանդ: Բազմաթիւ տիկիներ արտագրում են խնդրագիրը հարիւրաւոր օրինակներով: Մօտ երկու հարիւր ուսուցիչներ, բժիշկներ և ուսանողներ փետրւարի 25-27-ին ճանապարհ են ընկնում Ֆինլանդիայի զանազան ծայրերը: Չնայելով ձիւնին, չնայելով 30<sup>0</sup> ցրտին, նրանք հասնում են խնդրագիրը Ֆինլանդիայի բոլոր համայնքները, նոյնիսկ բևեռային շրջանից դէպի հիւսիս, և

մարտի 5-ին խնդրագիրը ուղարկուած է կայսեր ծածկած 523,000 ստորագրութեամբ:

Թշուա երկրի բոլոր անկիւններում կատարուած են շարունակ բողոքի ցոյցեր:

Ոչ մի ֆինլանդացի տպարանատեր չհամաձայնեց տպել իրենց քաղաքական մահաւան դատաւճիռը յայտնող ու կ ա զ ը: Ֆինլանդիայի պետական քարտուղարը և տեղական պաշտօնական թերթի խմբագիրը հրատարական տւին իրենց պաշտօններից:

Ֆինլանդացի խմբագիրները, որոնց արգելած էր քննել իրենց թերթերում նոր ուկազը, յայտնեցին իրենց բողոքը հետեւեալ ձևով: Ահագին տառերով նըրանք տպեցին Սահմանադրութեան այս երկու յօդուածները.

40. Ոչ մի օրէնք չի կարող հրատարակել, ոչ մի գորութիւն ունեցող օրէնք չի կարող վերացել տէրութեան պետի կողմից առանց Ազգային ժողովի համաձայնութեան:

71. Սահմանադրութիւնը չի կարող փոփոխութեան ենթարկել եւ ոչ ոչնչացել առանց պետական չորս դասակարգերի համաձայնութեան:

Եւրօպական լրագիրների ասելով՝ նոյն ոգին տիրում է ամբողջ ֆինլանդացի ժողովրդի մէջ, որ վճռել է մինչև վերջին հարաւորութիւն պաշտպանել իր ազատութիւնները, իր իրաւունքները, իր Սահմանադրութիւնը:

Գժգոհութիւնը տարածուած է և ֆինլանդիայից դուրս: Եւրօպական հասարակական կարծիքը վերաբերում է ֆինլանդիային ամենաջերմ համակրութեամբ, որ առանձնապէս ուժգին կերպով արտայայտուած է Շվեդիայում և Նորվեգիայում: Այդ երկիրների կառավարութիւնը, ինչպէս հազորդում են լրագիրները, մտադիր է իբրև բողոք՝ պատգամաւոր չուղարկել Նիկոլայ II-ի նախաձեռնութեամբ հրաւիրւած զինաթափութեան խորհրդաժողովին:

### Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

\* \*

„Standard“-ի Պօլսի թղթակիցը քննութեան առնելով հայ ժողովրդին ահաբեկ թշուաութեան պատճառները գաւառներուն մէջ, մասնանիշ կ'ընէ հետեւեալ կէտերը: Նախ՝ ջ ա թ դ ե թ ը, որոնք զօկեցին ընտանիքները իրենց նեցուկներէն: Երկրորդ՝ ս ի ս տ է մ ա կ ա ն կ ո ղ ո պ տ ու մ ն ե թ ը, որոնք կապտեցին ժողովուրդը իր ունեցածէն: Երրորդ՝ խ մ ք ո վ ի ն տ ա թ ա գ թ ու մ ը, որ Պօլսէն գաւառները մղեց բոլոր այն աշխատող ձեռքերը, որոնք Պօլսի մէջ կամ անոր շրջակայքը զբաղումներ ունենալով իրենց ընտանիքներուն ապուսալը կրնային հայթայթել: Այդ տարագրւած տարրը բեռ մը եղած է իր ընտանիքին, որովհետև երկրագործութեան անընդունակ է, իսկ ընել կրցած գործն ալ չկայ Փոքր-Ասիոյ մէջ: Եթէ ենթադրենք իսկ թէ գործի մը կարելի ըլլայ ձեռնարկել, չորրորդ պայման մը՝ պ ա շ ա թ մ ա ն դ թ ու թ ի լ ն ը, որ իրապէս գոյութիւն ունի Փոքր-Ասիոյ մէջ, անհնար կը դարձնէ որ և է երթուել:

Թղթակիցը ա ն կ ա յ ու լ ն և յ ա թ ա թ թ ը ա կ ա ն

օ գ ն ու թ ի լ ն մը միայն համարելով Եւրօպայէն եկած նպատները, որոնց 80 0/0 քիւրդին գրպանը մշտնեղու սահմանած է, կ'աւելցնէ.

„Իրապէս հարկաւոր եղածը հանրային ապահովութիւնն է, որպէս զի այդ դժբախտները կարենան իրենց սովորական գործերով դրաղիլ, եւ գիւղէ գիւղ հաղորդակցելու ազատութիւնը: Օտար պետութեան մը հովանիէն դուրս տարակուսելի է այդպիսի արդիւնք մը ձեռք ձգել: Մտտ հաւանական է որ ձեւական հովանաւորութիւնն ալ բուէր, բայց այդ ուղղութեամբ բան մը ընել պէտք է, եթէ կ'ուզի հայերը փրկել կատարեալ ջնջումէ մը: Հոս փախուք եղած պարզ թելադրանքի մը նայելով՝ եւրօպական պետութիւն մը իր հովանաւորութեան տակ պիտի աւանդ եղեր նախընտրաբար երկրին ասիական նահանգներէն մէկը եւ այդպիսով ուժասպառ հայ բնակչութեան միջոց մը պիտի տայ խաղաղ եւ ապահով ապրելու: Այդպէս պայտպանած նահանգ մը վերջի վերջոյ ապաստան մը կը դառնար բովանդակ հայ բնակչութեան, որ շատ շուտով կը վերհանդադէր, եթէ միայն տրուի իրեն այդ հաւանականութիւնը, որ այժմս կը պակսի իրենս:“

\* \*

Temps „Արեւելքի գործեր“ խորագրով իր 19 մարտ խմբագրականին մէջ, հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէ հայկական խնդրի մասին:

„Արեւելքի լուրերը, քանի մը շարած է իմք, բուն կերպով մտազբառ կ'ընեն ամէն անոնք, որոնք ձգարիս զաղափար մը ունին այն անկայուն կացութեան մասին, որ ստեղծեցաւ եւրօպական համըգին մասնկացած քաղաքականութիւնով:

Պիտի թւէր թէ Արդիւլ շամիւ սրտով պիտի ըստար ուշ չհրաւիրել Մասուլիայի շարժերու զոհերէն կենդանի մասցածներուն վրայ: Եւրօպական ողորմասիրութիւնը զբաղած էր դարմանել այն վէրքերը, որոնց առջին քաղաքականութիւնը չէր կրցած կամ ուզած աննը: Որքանոցնոր հիւրընկալած էին Հայաստանի որբերը: Դեռ նոր ամէնքն ալ զոցեցին սուլթանին հրամանով: Ծամբաները լեցած են մանուկներով, որոնք ոչ հաց ունին, ոչ տուն-տնոյ, ոչ պաշտպան մը: Եւ աս այն պահուն էր սովը կրպատարաստի պակելու քիւրդերուն ըրածը եւ երբ Բուսիան, անխորհուրդ կերպով ետ թիւրքիս կըծամբէ հազարաւոր փախստականներ անողոք մահան մը դատաւարուած:

Վէսթմինստըի դուքսը Եւրօպային կոչ կ'ընէ: Պէտք է յուսալ թէ ժողովուրդներու խիղճը պիտի արթննայ եւ թոյլ չպիտի տայ կտաւալարութիւններուն որ մարդկայնութեան դէմ նոր ոճրափործ մը կատարել թողուն, որ միանգամայն խնծութիւն մը պիտի ըլլար եւ անուղղելի սխալ մը քաղաքական տեսակետով: Ժամը հասած է քարծնորոգումներու գործը ձեռք առնելու: Սպասելու քաջաւորել ըսել է այն զարեւի խորհրդատուները, որոնք թիւրքերուն կործանելով, հրդեհ մը կը զբնկցեն, որուն հետեւանքները ամբողջ Եւրօպան պիտի կրէ: Պէտք է ժամանակին միջամտել Հայաստան.....

Երբ պիտի հասկնան որ Արեւելքի մէջ պայթումն մը անշին առնելու միակ միջոցը աշխատելն է սնդուլ եւ անդադրում՝ արդարութեան եւ առաջիմութեան յայտարարի մը, եւ կըքաւէ որ Եւրօպան հաստատ կերպով կամենայ եւ ուղղամտօրէն համաձայնութեան զայ յաղթանարելու համար Բ. Դոան, միսիսիան մոլեռանդութեան եւ սուլթանին մաքիսակետութեան դժմարանները:“

\* \*

Հայր Ֆելիքս Էարմըթեան իր „Oeuvres des Ecoles d'Orient“ երկամեայ հանդէսին 219-րդ թւին մէջ հրատարակած է ընդարձակ տեղեկագիր մը, որ իր ըսելով, Թիւրքիոյ ներքին գաւառներու քանի մը հայ եկեղեցականներ և երեւելիներ ուղղած են եղեր վեր-

ընտրելու Էջմիածնի կաթողիկոսին և Առաքելի Տաշիրցու հայրերուն:

Այդ տեղեկագրին բովանդակութիւնը նորութիւն մը չէ մեր ընթերցողներուն համար, ուստի աւելորդ կը համարինք հոս զտեղեկ: Հ. Ըարմըթեան այդ տեղեկագրին պատճենները խրկելով Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններուն, սրտաճմրէիկ կոչ մը և առաջարան մը կցած է անոնց, ուրկէ առաջ կը բերենք հետեւեալ տողերը, որոնք կ'ամփոփեն միանգամայն թէ տեղեկագրին սպաւորութիւնը և թէ Հ. Ըարմըթեանին կոչը:

«Նիւս այլ եւս այն միասամուռ խողխողումները չն՛ս, որոնք զործ կը դուրս դնալտ հայտնուս վրայ. 1895-96-ի այն անող մարտագոծները չն՛ս, որոնք բռնի եւ մէկ օրւսն մէջ քնաշինջ վրէժէն, հրամայով եւ տրւած նշանի մը վրայ, քահարքի մը կամ զինքի մը բարձր քնակիչները, ողորկելով անոնք հայտնու արհնով:

Թիւրքերը հասկցան որ Երուսալմ վերջապէս յուզեցու այդ շարժերէն, եւ որովհետեւ հիմա կը վախճան զինքն անթաւսութենէ մը, փոխեցին իրենց գործելու եղանակը:

Մաղմաղ կրակի վրայ նահատակութիւնն է, թագուն շընշուսն է, հարստացնելու ամբեհն ստկալին եւ խմբէն անազորոյնը, որ կազմակերպած են անոնք տարբի է մը իվեր, մասունակ հետաւոր նահանգներուն մէջ. հայ ցեղին դէմ, որը երգւած են քնաշինջ ընել դանդաղորէն. քայց անվրէպ, հարկաւոր միջոցները ձեռք աննելով Երուսալմ չստիպանք շուրջելու համար:

Հոգեվարք ժողովրդի մը այս յուսամաս կըզը կարգալէ ետք պիտի հասկցել որ պէտք է քան մը ընել, որ ազաւ որոշումներ պէտք է ձեռք աննել կարճ միջոցի մէջ, ազատելու համար զինքը այն ահակի կրօնամուտն որուն անդու կ'աշխատին իր հարստահարչները:

Կատարական պետերու տեղ, եթէ անոնք անտարբեր մասն այս ժողովրդի ծակատազրին, որ իրենց աչքին տընել կը կտորեն, ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԺԻՔՆ Է—այն մեծ վեհապետը, աւելի հզօր եւ աւելի վեհամծ յաճախ քան թագապետը զուկները—որ պարտաւոր է իր ձեռքն աննել հարստահարած Հայաստանի դատը, կեղծեցի թիւրքերու դէմ, հարկադրելով պետութիւնները զործելու, նոյն իսկ ուժով, մարդկայնութեան եւ իրաւունքի համաձայն»:

„Ի ԽԱԶ ՀԱՆ ԶԻՄ“, Գ. ԵԱՆ ԵՆ ԳԱԼՓԱՔԾԵԱՆ, 1899.

Գրքոյկը, ինչպէս մասամբ կարելի է գուշակել վերնագրից, ներուած է հայ փարիսեցիների հայ յեղափոխական շարժման դէմ մղած արշաւանքին:

Այն ժամանակ, երբ դուք ընթերցողներ, վաղուց սովոր էք մեր արտասահմանեան հրատարակութիւններում տեսնել բազմաթիւ գրական փահելականներ, որոնք միայն փոշի են բարձրացնում օդում. այն ժամանակ, երբ դուք այդ ասպարէզում անընդհատ գործ էք ունեցել կեղծաւորների կամ ինքնամոլ յիմարների հետ, որոնք, եթէ ուժ ունենային, կարող էին բարոյապէս ձեզ ստորացնել միայն,— ներկայ փորձիկ գրքոյկը թերթելով կարող էք փոքր ինչ հանգստանալ: Հեղեփանների յեղափոխական տրամադրութիւնը, նրանց անպայման յեղափոխական աշխարհահայեացքը — ահա գրքոյկի արժանաւորութիւնը: Գուք կարդում էք գրքոյկը և գոնէ մի րոպէ սփոփոււ, որ անմիջապէս ձեզ հետ շփուող յեղափոխական շրջաններից դուրս ևս կան հայ մարդիկ, որոնց մտքի ելեւէջները և սրտի զարկերը այնքան ծանօթ, այնքան մտ, այնքան հասկանալի են ձեզ համար: Այդպիսի սրտեր, այդպիսի ձայներն են, որ, կենդանի պահելով յեղափոխական միջոցորտը հասարակութեան մէջ, պիտի նպաստեն մեր դժուար գործի յաջող ընթացքին:

Գրքոյկի այս ընդհանուր սպաւորութիւնից դիմելով մանրամասնութիւններին, դժբախտաբար տեղ-տեղ մենք հանդիպում ենք մի շարք հակասութիւնների և չափազանցութիւնների, որոնցից յիշենք երկուսը:

Թւելով, օրինակ, հայ ժողովրդի կրած կորուստների պատասխանատուներին, պպ. հեղինակները տասը կէտերից եօթներորդում յիշում են նաև «հայ յեղափոխականներուն՝ իրենց դիւցադնական գործունէութեան մէջ պարզած անհամբերութեամբ և հուրքին սաստկութեամբ»: Մենք պատրաստ ենք երկու ձեռքով ստորագրել յիշեալ տասը կէտերից իննին. պատրաստ ենք նաև աւելացնել այդ իննին թէկուզ նոյնչափ նոր կէտեր ևս, բայց յիշեալ եօթերորդի դէմ բողբոջում ենք մեր բոլոր ուժով: Մենք հակառակ ենք այդ կէտին ոչ միայն նրա համար, որ մեր յեղափոխականների մէջ դանհամբերութեան և հուրքին սաստկութեան տեղ ընդհակառակը մենք նկատում ենք չափազանց համբերութիւն և հուրքի թուլութիւն, այլ և նրա համար, որ միանգամայն համաձայն ենք մի քանի երես առաջ նոյն գրքոյկում պպ. հեղեփանների ստորագծած այն խօսքերի հետ, թէ «պատմական օրէնքներու և հարկեցուցիչ պարագաներու առջև ոչ անհատական կամքերը նշանակութիւն ունին և ոչ խոհեմութիւն կամ էշու համբերութիւն յանձնարարող քարոզները»:

Ձեռք կարող համաձայնել նաև Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի ու մասնաւորապէս ներսէս պատրիարքի մասին հեղինակների ունեցած կարծիքի հետ: Սկզբունքով իհարկէ մենք համակարծիք ենք պպ. հեղինակների հետ, թէ աւելի լաւ կը լինէր, եթէ ներսէս և իր ժամակակիցները ուսումնական պատերազմի միջոցին զբաղէին Թիւրքիայի որևէ կէտում որոշ յեղափոխական ձեռնարկի պատրաստութեամբ: Այդ միանգամայն նպատակայարմար քայլ կը լինէր թէկուզ միայն այն տեսակետից, որ այդպիսով օր առաջ ոտ դրած կը լինէինք միակ ուղիղ ճանապարհի վրայ: Բայց բաւականին հիմք չունենալով համարձակօրէն պնդելու, թէ այդ հանգամանքներում անպատճառ հայերս աւելի քիչ զօհերով պիտի անցնէինք մեր ազատութեան ճանապարհը, մենք ոչ մի իրաւունք չունենք ներսէսի գործունէութիւնը և դրա հետևանք Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը համարել հետագայ աղէտների «հիմնքար»: Անցեալը ձևեր կտրտել ու այսպէս կամ այնպէս դասաւորելը դժուար գործ չէ, բայց չպիտի մոռանալ որ ներսէսը իր ժամանակի գործիչ էր և մենք անկարող ենք պահանջել որ անպատճառ նա լինէր նաև այն ժամանակի համար կարևոր «իսնթ»-ը... Հարցը նրանումը չէ նոյնիսկ, թէ համապատասխանում էր ներսէսի առաքելութիւնը դէպի Բերլին՝ Համբիղի շահերին թէ ոչ,— մեր կարծիքով չէր համապատասխանում, — այլ նրանում, թէ ներսէսը իր գործունէութեամբ աւելացրեց արդեօք մի մեծ գործունէ ևս հայկական կեանքի առաջնութեան հոսանքում թէ ոչ: Իսկ այս տեսակետից խնդիրը պարզելու համար մենք չունենք մեր ձեռքում ուրիշ չափ, քան 1) ներսէսի համարեալ յեղափոխական քայլը, երբ նա Ս. Ստեփանօ, ուսուցիչի բանակը գնաց և այնտեղից 16-րդ յօդուածը բերեց, 2) 61-րդ յօդուածի նշանակութիւնը, որով հայկական հարցը առաջին անգամ դարձաւ միջազգային քաղաքական



Հարց, և 3) այն ընդհանուր անօրինակ կրթիչ ու գեղարդ ազդեցութիւնը, որ ունեցան 16 և 61-րդ յօդուածները ժամանակակից ամբողջ հայութեան վրայ և դրանով մեծապէս նպաստեցին յեղափոխական հողի մշակմանը մեր մէջ: Եթէ կան դատապարտելիներ, այդ այն գործիչներն են, որոնք ոչ պատրիարք և ոչ էլ ներսէսներ լինելով հանդերձ 78 թւականից յետոյ էլ յամառ միակողմանութեամբ շարունակում էին, իսկ ոմանք մինչև այժմ էլ շարունակում են, մնալ բացառապէս 61-րդ յօդուածի հողի վրայ:

Վերջացնում ենք սրանով մեր ասելիքը պպ. Գ. Եանի և Գալիպաքեանի գրքոյի մասին: Մի քանի ուրիշ անձը-դութիւններ և թերութիւններ ընթերցողը անշուշտ կնքը կը նկատի:

**Մ Ա Հ Գ Ո Յ Ժ**

Ե Ր Ի Ա Ն Դ Դ Ա Զ Ա Ր Ե Ա Ն

Ներկայ տարւայ փետրուարի 2-ին (յունուարի 21-ին) Թիֆլիզի քաղաքային հիւանդանոցում կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանեց ուսուցիչ Երևանդ Ղազարեանը՝ դեռ երիտասարդ հասակում: Միջնակարգ ուսումն աւարտելուց յետոյ նա նւիրեց ուսուցչութեան՝ մերթ հայ դպրոցներում, մերթ մասնաւոր դասեր տալով: Իբր վերին աստիճանի մարուր և անպայման դադարի մարդ՝ նա իր ամբողջ երիտասարդութիւնն անցկացրեց ժողովուրդին յօտիկ, ապրեց նրա շահերին ծառայելու միակ մտքով, աշխատեց ժամանակակից հրատապ հարցերի շրջանում:

Դեռ աշակերտ հասակից՝ նա երբեք չի հաշտուել որ և է կոմպրոմիսի հետ և այդ պատճառով՝ ուր և լինէր նա, մենք նրան միշտ տեսել ենք բողոքող, դիմադրող բանակի մէջ: Ղազարեանը իր 15 թէ 25 տարեկան հասակում բնաւորութեան նոյն գծերն ունէր — միշտ շիտակ, միշտ ուղղամիտ և ճշմարտասէր: Նա յամառ էր իր բնաւորութեան այդ համակրելի գծերում, և հէնց այդ յամառութիւնն էր, որ նրան այնքան անգամ թողնում էր անգործ, անպաշտօն, երբեմն առանց ընկերների, նոյնիսկ կատարեալ չբաւորութեան մէջ՝ բառիս բուն նշանակութեամբ...

Յեղափոխական շարժման մէջ կոպկաստում նրա մասնակցութիւնը նոյնպէս միշտ ջերմ է եղել:

Տարիների ընթացքում երբեք նա չի խնայել այդ շարժմանը տալու իր ուժերի և ժամանակի մեծ մասը, նաև իր վերջին կօպէկները, երբ նրա առաջ ներկայացել է այս կամ այն ընթացիկ կամ ընդհանուր պահանջը: Իբրև յեղափոխական՝ նա մի քանի անգամ բանտարկուել է...

Մեռաւ Ղազարեանը ընկերներից հեռու, օտարների խնամքի տակ, դժբախտ իր կեանքի վերջին րոպէներում նոյնպէս, ինչպէս դժբախտ էր իր ամբողջ կեանքում...

Այո, մեռաւ, բայց թող ապրի մեր մէջ նրա բարոյական մաքուր պատկերը, նրա սէրը դէպի ժողովուրդը և դէպի գաղափարը:

**Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն**

**ՆՄՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ասացած է՝**

„Արմէնիա“ 5 Ֆրանք, — Կ. Օրէնուօիցայէն՝ Թ. Մարտիրոսեան 5 Ֆրանք, — Լէսկովիցայէն՝ Գ. Ֆրանկիւնեան 5 Ֆրանք, Լոն-դօնէն՝ Հայաստանցի մէկուկէս շիւլին, — Ուսանողէ սւ 7 Ֆրանք: ՎրիդԱԿ — Ն. 2 (93)-ի մէջ Լօրէնսի 22 ղօլարին ավմամբ աւելցւած է 4 սէնթ:

**ՏԱՊԱՐ Կեդր. Կօմիտէն՝**

Հոկտեմբեր ամսու համար՝ Գնդակ 40 դահեկան, Հրաչ (3 շաբթավար) 15, Նարեկացի (շաբթավար) 5: Նոյեմբեր ամսու համար՝ Նարեկացի 10 դահեկան, Հրաչ (երկու շաբթավար) 10, Եւս (երկու շաբթավար) 10, Նարեկացի (երկու շաբթավար) 15, Սուլիշ շրջ. (հոկտ.) 35, Ջրվէժ շրջ. (հոկտ. նոյ.) 54, Գեղջուկ շրջ. (հոկտ. նոյ.) 20, Շիփոթ շրջ. (հոկտ. նոյ.) 20, Ա.Բ. շրջ. 20, Ա. Բ. Թ. 5, Նարեկացի (շաբթավար) 10, Հրաչ (շաբթավար) 5: Նարեկացի (երկու շաբթավար) 20 դահեկան, Հրաչ (երկու շաբթավար) 20, Սուլիշ շրջ. (Նոյեմբերի ամսավար) 35, Հրաչ (շաբթավար) 10, Նարեկացի 10, Պերժ (յունիսէն դեկտեմբեր — 7 ամսավար) 70:

1899 յունուար ամսուն համար — Կրակ 100 դահեկան, Հրաչ (երեք շաբթավար) 30, Նարեկացի (երեք շաբթավար) 30, Նարեկացի (երկու շաբթավար) 20: ՀԱՄԱԳՈՒՄԱՐ 619 դահեկան:

**ՈՍԿԵՅԱՆՔԻ Կօմիտէն՝**

Նարսիմ 26 դահեկան, Ոսկի 6, 75, Անծեղ 5, 25, Արսլանեան խ. 10, 50: Գումար 48 դահեկան:

**ՆԱԻԱՅԱՆԳՍՏԻ Կօմիտէն՝**

Կարո-Ների խ. 1 ուրլի 85 կօպէկ, 2 նկարի վաճառուից 2, Դրակիթ քէկ խումրից, Սպարապետի միջոցով — օր. Ս. Ակիսեանց տ. Ս. Արզումանց, տ. Զ. վարժուհի, Սեղանից, Բազարաւ Բազարաւունի, Աստօն էֆ., Մարգարի ծանօթներ պ. Հաւատարիմ, Վանանդ, Թաղէսու Հարեան մէկ-մէկ ուրլի, օր. Ա. Ստեփանեանց, տ. Դ. Զարդարեանց, Նկարիչ, Սիմօն 50-ական կօպէկ: Գումար 14 ուրլի 85 կօպէկ:

**ԲԱԿԱՆԵԱՆ Կ. Կօմիտէն՝**

ԳԵՏԱՓԻ Կօմիտէն — 1898-ի հաշւէն, անդամներու ամսավար-ժողներ՝ 70 լիւ 45 սանթ., Գազիկ խ. 10, Վ. Բ. 14, 1899-ի մէջ Գազիկ խ. 10, Եփրատի արիւնջ 5, Ովկիանոս խումբ 10: Գումար 119 լիւ, 45 սանթիս:

**ՎԻՃԱՊԻ „ՄաՏ“ Կօմիտէն՝**

Կ. Հրաբուխ 20 դահեկան, Անամուն 20, Սերոբի հաշւին 40, Արթուրակ 10, Արծի խ. 60, Կայծակ 20, Մսն 5:

**ՊՐՈՎԻԴԵՆՍԻ Կօմիտէն՝**

Իրրիւ գէնքի դրամ, 71 ղօլար, հետեւեալ անծերէն՝ Դ. Յակ., Գ. Խան., Ե. Ման., Զ. Փափ., Կ. Մին., Ս. Տէր-Յար., Ե. Խալ. մէկուկէկ, — Խոյարար Մկր., Ա. Զաք., Գ. Սար., Ե. Սօւ., Կ. Եր. 2-ական, — Ա. Մաւ., Ա. Սար., Ե... Լազ., 3-ական, — Ե. Մուշ., Կ. Տէր-Յակ., Կ. Ստեփ., Ն. Թաղ., Գ. Մանու., Ա. Աւ., Ա. Թաթ., Մ. Տէր-Ման., Լ. Մէմ. 5-ական: — Անդամավարներ 1898 տարեշրջանին համար 45: Գումար 116 ղօլար:

**ԱՆՔՍԱՆԳՐԻՈՅ Կօմիտէն՝**

1898 յունիսէն դեկտեմբեր. — Մեղու 210 դահեկան ողջ, Գօգան պէյ 210, Նօզ 175, Ե. Ազիզ 140, Պօսեցի 140, Վիճակահանութիւնէ 135, Սրտոտի ծեղումը հանգանակած 105, Մանր տօմսերէ 105, Միութիւնը փոկութիւն է 70, Տիկ. Մայր Հայաստան 70, Շուշանիկ 70, Կէշիշեան 70, Սրտոտ 70, Բոյս 70, Յուլի 70, Շանթ խումբ 57, Տիրտէս 56, Իցաիթամաս 35, Համեսա 35, Կիզէլ 35, Ե. Լազ. 32, Գ. Լուպանեան 20, Ս. Է. Գ. 10, Մըշիւն 10, Մ. Վ. 5, Լեւոն 5, Եունուար ամսու գումանակէն 29: Գումար 2,039 դահեկան ողջ:

Խմբագրութեան գիմէլ հետեւեալ հասցեով՝  
Rédaction du Droschak, Genève (Suisse)